


796/062)

2, 3, 4-5, 6, 7-8, 8

հեղինակ Կոնստանտին Կոնստանտինով



Ն.Ս.Ը.Ս.

ԲԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴԿԱՆՈՒԻ ՄԻՈՒԹԻՒՆ
• ԲԻՄԵՍԱԼ 1918 ԽՆ •



HOMENETMEN

— Hai Scout —

REVUE MENSUELLE DE SCOUTISME
ET DE CULTURE PHYSIQUE

Organe de l'U. G. Arménienne



Թիի 2

ՄԱՅԻՍ — 1946 — MAI

N° 2


116

ԲԱՐՁՐԱՅԻՐ ԲԱՐՁՐԱՅՈՒՐ



Ն.Ս.Ը.Ս.

ԲԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴԴԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ
• ԲԻՄՆԵԱԼ 1918 ԽՆ •



HOMENETMEN

- Haï Scout -

REVUE MENSUELLE DE SCOUTISME
ET DE CULTURE PHYSIQUE

Organe de l'U. G. Arménienne



ԹԻԻ 2

ՄԱՅԻՍ — 1946 — MAI

Nº 2

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԽՕՍԻԸ

Անբաժնե Միացումը

Գ. ՇԱՀԻՆԵԱՆ

Հինգ տարի ակամայ լուրքենէ յետոյ

Գ. ՄԵՐՃԱՆՕՅ

Սկաուտիքի Առաջնորդը

Մ. Ե.

Հայ Սկաուտին հեյրենասիրութիւնը

Սկաուտական շարքերը մտնելու համար

Հայ Սկաուտին Գաւանանքը

Հայ Սկաուտին քերականը (Ա. դաս)

Հայ Սկաուտը կը սիրէ իր ազգը

եւ կը սիրէ յանոր պատմութիւնը

Յ. ԹԻԻՐԱՊԵԱՆ

Հայ Սկաուտը կը յարգէ իր ազգին

մեծ գաւակները

էջ մը Ա. Իսահակեանէ

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

Հետքեր եւ նշաններ

ՄԵՐ ԳԱՅԼ

Մարմնակրթանքը գիտութեան ակնոցով

ՏՕԲԹ. Հ. ԳԱԼՃԵԱՆ

Գաւընքացի անմիջական խնամքներու

Ֆուրպօլ

ԳՆԳԱՍԷՐ

Հայրենիքի կոչը եւ ներգաղթը

Ք. ԺՊՏՈՒՆԻ

Բարձրացիր, բարձրացուր

Ա. ԿԱՊԵՆՅ

Հ.Մ.Ը.Մ. և Հայ Սկաուտ անունին շուրջ

ԺԻՐԱՅՐ Ա. ՄԻՆԹԱՆՃԵԱՆ

Մարմնակրթանքը և Հայաստանի մէջ

Մ. ՄԱԼՈՒՄԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ը եւ Սգատօնը

Հ.Մ.Ը.Մ.ը արտասահմանի մէջ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Պէյրուք, 1944ի միջմասնանիւղային խաղերէն տողանցք մը

Երեսանի Մարգարանը — Գլխաւոր Մուտք

Հալէպ. Պատկերապօլի իգական խումբը

Հալէպ. Սկաուտ. խումբերու տողանցքը

Մարտէլլի Հ.Մ.Ը.Մ.ի նաաջին խումբը

Մարտէլլի Տարբ Մարգականի Ֆուրպօլի խումբերը

Պէյրուքի եւ Հալէպի Պատկերապօլի խումբերը

Ազատ Աղամեան եւ Նուարդ Մարտիկեան



4306-52



ԽԱՉԱՉԵԻՈՒՄ = ԴԱԻԱՃԱՆՈՒԹԻՒՆ

Հայր բազմաթիւ առաքինութիւններով օժտուած ժողովուրդ մըն է որ գերու – թեան երկարատեւ շրջանի մը բարոյական ու հոգեկան վատ անդրադարձումները թօթափելու համար՝ կը փնտռէ իր սե – փական օրէնքը, իր հարազատ միջավայ – րը:

Վկայ՝ Հայաստանը որ առանց փողի ու թմբուկի՝ կը չննայ ու կը գեղեցկա – նայ տարուէ տարի եւ ուր՝ հնամենի հա – յութեան ժառանգորդները կը վերընծիւ – դին թարմ ուժերով, բարոյապէս ու Ֆի – զիքապէս:

Դարաւոր ստրկութեան մը ընթացքին, բոնութեան ու հալածանքի դէմ ինքնա – պաշտպանութեան բնազդը չէր կրնար նա – հանջ չարտադրել անհատներու բարոյա – կան խառնուածքին եւ չխաթարել մեր ազ – գային նկարագիրը:

Ինչ որ սակայն կրցինք փրկել մեր պա – պերուն առնական հոգիէն, — ամէն կար – դի բոնութեան հանդէպ՝ դիմադրութեան յանդգնութիւն մը, մարդկային եւ ազգա – յին իրաւունքներու պաշտպանութեան ճամբուն վրայ՝ ծանր զոհաբերութեան յօտարակամ յանձնառութիւններ՝ հայ ժո – ղովուրդին բարոյական բարձրութիւնը վկայող անհերքելի եւ անկորնչելի արձա – նադրութիւններ են, վերակենդանացման

ու բարեշրջման մեր ընդունակութիւնը հաստատող ամուր մեկնակէտեր:

Եւ սակայն, կան որ, ժողովուրդին թէ մտաւորականութեան մէջ, չեն վարանիւր թեթեւօրէն հայը որակելու «անմիաբան», առանց կշռելու բառին ծանրութիւնը:

Պահ մը սակայն, վերջիչենք մեր ժա – մանակակից դէպքերը՝ որոնք անակնկալ փոթորկի ուժգնութեամբ պայթեցան՝ սպառնալով հիմէն խախտել մեր դոյու – թիւնը:

Թուրք բռնապետութեան ամենէն խրժ – դուժ հարուածին տակ՝ Հայը գիտցաւ միասին տառապիլ:

Աքտորը չարձանադրեց հայ անունը ա – բառաւորոզ ուեէ հաւաքական արարք:

Ընդհակառակն:

Վերադարձը՝ կիսամերկ ու սովալլուկ, անտէր ու տնաքանդ բազմութիւններուն մէջ ի յայտ բերաւ փոխադարձ օգնու – թեան ու գուրգուրանքի, ազգային սերտ համերաշխութեան յուզիչ դրուազներ:

Իսկ երբ պէտք եղաւ հայրենիքի վերա – հաստատման համար ոտքի կանգնիլ, Հա – յը պէտք չունեցաւ զօրակոչի շնորհալի յայտարարութիւններու:

Ո՛ր մէկ ուժ կրնար անոր պարտադրել հայրենիքի փրկութեան անունով պահան –

ջուած դերադոյն զոհողութիւնը :

Բայց երբ Պատմութեան ժամը հնչեց, հեռաւոր Ամերիկայէն մինչեւ Կովկաս, անցնելով արարական անապատներէն, որբերու եւ այրիներու այս ժողովուրդը՝ ծերերով ու պատանիներով՝ սիրայօժար վաղեց զէպի օրհասական ու հերոսական պայքարի ճակատները :

ԱՄԲՈՂՁ ԱԶԳԸ ԿԱՄԱՒՈՐ...

Ազգերու դարաւոր պատմութիւնը՝ ուրիշ ո՛չ մէկ ժողովուրդի անունին դէմ կրնայ արձանադրել նման վկայութիւն մը :

Ո՛չ, այս ժողովուրդը «անմիաբան» չէ, երբ իր հոգեբուն ու իր ցաւերուն առջեւ կը մնայ ինքնիրեն՝ իր զլխով ու իր սըրտով :

Անմիաբանութիւնը խորթ եւ օտար ազգեցութիւններու միջամտութիւնն է մեր հանրային Գործին մէջ, մեր նկարագրին հականիշ՝ շիլ ու պղտոր հաշիւներու ազգեցութիւնն է եւ իրր հետեւանք՝ կրնայ ըլլալ միայն՝ ալլասերած տարրերու փոռատենչ կամ շահամուլ զործունէութեան թունաւոր պտուղը :

Կ'ըսենք այս՝ որովհետեւ պէտք է որ անդրադառնանք կարգ մը շարադէտ երեւոյթներու :

Հայ ժողովուրդին սրտցաւ ու դիտակից առաջնորդները, բոլոր մարդերու մէջ եւ ժողովուրդը ինքը, ահա տարիներէ ի վեր, պէտքը կը շեշտեն զործակցութեան :

Որովհետեւ, եթէ արիւնալի մահուան սպառնալիքը իսպառ հեռացած է այլեւս Հայութեան զլխէն, սակայն կորստեան վտանգը ամէն օր կը կրծէ մեր զոյութեան արմատները :

Օտար ալլասերող ազգեցութիւններու յորձանքին առջեւ, ազգային դիմադժի պահպանման անհրաժեշտ հաստատութիւններէն եւ նոյնիսկ տարրական միջոցներէն զուրկ հայ հոգին, ամէն օր անզգալարար՝ նահանջ մը կ'արձանագրէ :

Օրը որ կ'անցնի հայրենական միջափայլէն հեռու, թեւ մը կը փրցնէ կը տանի մեր ինքնութենէն :

Հոգ է վտանգը :

Եւ այդ վտանգին առջեւ, մարդկային

ո՛չ մէկ օրէնք կրնայ մեզ անձնատրուութիւն պարտադրել : Ընդհակառակն, ինքնապաշտպանութեան մեր բնական իրաւունքը մեզմէ կը պահանջէ մշտատեւ հսկում, այսինքն՝ դիտակից ու անձնուրաց զեկավարութիւն :

Եւ ուժերու բանաւոր տնտեսում :

Այսինքն՝ զործակցութիւն, սերտ ու անքակտելի զործակցութիւն, — ըսել է՝ միութիւն :

Եթէ այդ է որ կը մատնանչուի ամէն կողմէ՝ իրր ցաւին միակ սպեղանի, կը նշանակէ թէ Սկզբունքին ու Գործին դէմ որեւէ խոչընդոտ՝ որ կողմէն ալ դայ որեւէ առարկութեամբ ու պատրուակով, ո՛չ միայն փախուստ ու դասալքութիւն է հանրային փրկութեան ճակատէն, այլ դիտակցարար ընդունուած խափանարարութիւն :

Հայութեան ուժերը չափուած ու կըշտուած են այլեւս : Աչալուրջ հսկողութիւնն է որ փոթորկահար մեր նաւը կըրնայ առաջնորդել զէպի փրկութեան կայքը : Ուժերու ծայրայեղ խնայումն է որ կրնայ մեր թանկարժէք հնութիւնը փրկել քայքայման վտանգէն եւ թերեւս, օժտել նոր օրերու թարմութեամբ ու փայլով : Կաթիլ մը քրտինքը որ կը թափի որեւէ հայ ճակտէ յանուն հասարակաց ձեռնարկի մը, պէտք է ոռոգէ մեր առուն : Տերեւն իսկ որ կը թափի, պէտք է նպատակի մը յատկացուի ու ծառայէ :

Ընդհանուր շրջադիժէն դուրս՝ մեկուսի զործունէութիւնը այլեւս համազօր է ուժերու դիտակից սպառման. անխոհեմ շրոնայութիւն է. պատրուակ որ որեւէ արդարացում չունի, պերճանք որ կը տանի զէպի տեսանելի սնանկութիւն :

Մեկուսի զործունէութեան տենչը, այնքան աւելի վտանգաւոր ու դատապարտելի կը դառնայ, որքան, մանաւանդ նորահաս սերունդը՝ արդէն չափով մը սընած օտար ազգեցութիւններով, կը մոզէ կտրուիլ իր հարազատ զանգուածէն եւ զայն՝ ատով կը դարձնէ աւելի դիւրին որս մը՝ ալլասերման հրէշին :

Ահա, այս ըմբռնումն է, որ քիչ ան-

դին, ըսել կուտայ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնա –
դիրներէն, մեր վաստակաւոր ընկերոջ Գ.
Մերձանօֆին:

— Խաչաձեւումները վտանգաւոր են եւ
աւելին յաւանանութիւն է որ կը կատար–
ուի հայ ժողովուրդին հանդէպ...

Որակումը թող խորթ չհնչէ ուղղափառ
ականջներուն. ոչ ալ չափազանց նկատուի
խելօք գլուխներու կողմէ: Ան, ոչ խել
կարգ մը տխուր երեւոյթներու հանդէպ՝
սրտցաւ զործիչի մը արդար զայրոյթին
սկամայ կանչն է:

Այլ խորապէս մտածուած բնորոշումն է
զիտակցօրէն կազմակերպուած խաչաձե-
ւումներուն տրամարանական հետեւան –
քին, ո՛չ միայն մարդական եւ սկաուտա-
կան, այլ եւ հայ հանրային կեանքի բո-
լոր զեարիններուն վրայ, երեւոյթ որուն
մանրամասնօրէն կ'անդրադառնանք ուրիշ
տոթիւ:

— Այս բոլորը, կը գրէ ուրիշ հիմնադիր
մը, Առժմ. կեդր. վարչութեան նախա-
գահ՝ Գ. Շահինեան, ըմբռնելի կը դառ –
նան հոն, ուր քաղաքականութիւն կը
մտնէ: Ամէն անջատումի ետեւ, քաղաքա-
կանութիւն մը կայ պարսկուած: Ամէն
մեկուսացումի տակ, անձնակիս կամ խըմ-
բակցական նկատում մը կը պահուի:
Արդ, Հ.Մ.Ը.Մ.ը՝ իր առաջին քայլէն
խկ ժխտած է որեւէ քաղաքականութիւն
ու կը մնայ մեր մէջ միակ կազմակերպու-
թիւնը, ուր Հայը կը սորվի ի շահ բոլո-
րին գոհել ամէն անձնականութիւն, լոռ-
թիւն պարտադրելով իր եսին:

Որովհետեւ, անըմբռնելի է նոյն նպա-
տակը հետապնդող շարժման մը մէջ, ճեղ-
քեր ու անջատումներ բանալ:

Հ.Մ.Ը.Մ.ը անկուսակցական կազմա –
կերպութիւն մըն է որ չի կրնար տոկալ
քաղաքական ազդեցութեանց պայքարի՝
ստանց տուժելու իր կազմին եւ իր նպա-
տակին մէջ:

Ու շարժման օգուտը՝ մարմնակրթանքի,
մարզախաղի թէ սկաուտիզմի իր բաժա-
նումներով կը պահանջէ միացում ու մի-
ասնականութիւն, ուժերու համադրութիւն
նոյն դրօշին տակ:

Այս ըմբռնումով էր որ Առժմ. կեդր.
վարչութիւնը իր առաջին մտահոգութիւ-
նըն ըրաւ, համադրումարի մը մէջ միա –
ցնելու եւ ի մի ձուլելու մարդկան աշ-
լագան խումբերը:

Յատուկ շրջարեւականի մէջ որ լոյս
տեսաւ մեր Ա. թիւով, կը գրէր ան.

— Ձի բաւեր նոյն շարժումն մէջ՝ նոյն
նպատակին ծառայելու միտումով՝ առան-
ձին խումբեր կազմել: Հոն ուր անջատում
եւ մեկուսացում կայ, բնակիսօրէն կը
ստեղծուի մրցակցութիւն՝ ուժերու ամ –
պէտ վատնումով եւ միշտ՝ անհաճոյ հե-
տեւանքներով:

Մեր մարդիկ Եղբայրները ըմբռնած են
այս խօսքերով արտայայտուած խոր ճըշ-
մարտութիւնը: Ամէն կողմ կը տիրէ ջերմ
հետաքրքրութիւն. մեզ հասած նամակներ
անհրաժեշտութիւնը ցոյց կուտան փու –
թացնելու համազգային մարզական համե-
քաշխութեան ու միութեան Համադրումա-
րը, որ զիտենք թէ պիտի վերջանայ փայ-
լուն յաջողութեամբ մը:



ԱՆՀՐԱԹԵՇՏ ՄԻԱՑՈՒՄԸ

Պիտի համարձակիմ ըսել նաև անխուսափելի, որովհետև լուրջ դատողութեան առջև, չկայ որևէ պատճառ, որևէ պատրուակ որ կարենան արդարացնել մարդական անջատ ուժերու զոյութիւնն ու խափանել անոնց միացումը նոյն դրօշին շուրջ, նոյն անունին տակ:

Օրինակ չբերենք օտարը, որ կրնայ ինքզինքին թոյլ տալ քառասուն զոյնի ու նոյնքան ձեւի պերճանք: Օտարին համար ան զոհացումն է առողջագահական պահանջի մը:

Մենք անոր տուած ենք նաև ու մանաւանդ բարոյական բարձր նպատակ մը:

Կեղք Վարչութեան թիւ 2 շրջաբերա կանխն մէջ որ լոյս տեսաւ «Հ.Մ.Բ.Մ.»ի անցեալ համարով, իրօք, կը կարդանք:

— Ուրիշ ժողովուրդներու համար, մարմնակրթամիջը կրնայ նկատուիլ՝ երէ ոչ պերնանֆի, այլ հանելի եւ օգտակար ժամանցի միջոց մը:

«Մեզ համար, մարմնակրթանքի ու մարզանքի հաւաքական խաղեր, հանելիին եւ օգտակարին վրայ աւելցուցած են, առաջին օրերէն սկսեալ, ազգային մեծ պարտականութեան մը խորհուրդը: Հայ մարզական շարժումը երբէք նպատակ չէ ունեցած գոհանալ միայն ու միայն մարզելով մարմինը, այլ միեւնոյն ատեն, ան նկատուած է, հայ անհատին մէջ՝ ազգային կորովը, գործակցութեան ու համբարաշխութեան ոգին, ազգային հպարտութիւնն ու գիտակցութիւնը զարգացնելու ուժեղ եւ անսայթափ միջոցներէն մէկը և լատագոյնը:

«Իսկ այսօր, երբ մարզանքը, իր խրմբիական այլազան խաղերով, մեր մէջ կը դառնայ սկսուտական շարժման հետեւութիւնը՝ սկսուտական խումբերու մէջ հասած երիտասարդներուն համար, իսկ առաւելապէս կը ծառայէ ուժացման եւ օտարացման հօր ազդեցութիւններուն դէմ՝ Հայուն դիմադրական կորովը պահելու եւ բարձրացնելու »:

Այս ըմբռնումն է որ առաջին օրէն իսկ՝ տիրապետած է Հ.Մ.Բ.Մ.ի կազմին մէջ եւ ան, մեզ՝ չին թէ նոր Հ.Մ.Բ.Մ.ա-կաններուս կուտայ բարձր առաքելութեան մը ղերակատարի հանգամանքը:

Եւ այսօր, աւելի քան երբէք, մենք մեզի դաւած պիտի ըլլայինք, եթէ պահ մ'իսկ չեղէինք մեր այս ղիտակցութիւնէն:

Ահա թէ ինչո՞ւ, չենք կրնար ըմբռնել որևէ անջատում եւ մեկուսացում հայ մարմնակրթական մայր կազմակերպութիւնէն եւ հակամարտութիւն անոր դէմ:

Այս բոլորը ըմբռնելի կը դառնան հոն ուր քաղաքականութիւն կը մտնէ: Ամէն անջատումի ետեւ, քաղաքականութիւն մը կայ պարտկուած: Ամէն մեկուսացման տակ՝ անձնական կամ խմբական նկատում մը կը պահուի: Արդ, Հ.Մ.Բ.Մ.ը իր առաջին քայլէն իսկ ժխտած է որևէ քաղաքականութիւն, ու կը մնայ մեր մէջ միակ կազմակերպութիւնը ուր Հայը կը սորվի ի շահ բոլորին զոհել ամէն անձնականութիւն, լուրթիւն պարտադրել իր եսին:

Եւ այսօր, աւելի քան երբէք, այս ըմբռնումէն կը բխին մեր առաջնորդ նշանարանները, — վերջ բոլոր անջատումներուն, համադրութիւն բոլոր մարդական ուժերուն:

Այս ղիտակցութեամբ է որ Կեղք Վարչութիւնը ձեռնարկեց Փրանսահայ բոլոր մարդական խումբերու համագումարին, «միութիւն» նշանաբանին տակ, որովհետև օրուան անհրաժեշտութիւնն է:

Սուսափում չկայ այլևս: Տարիներ ամբողջ՝ միութիւն եւ զործակցութիւն հոլովեցինք: Վաղը պիտի կրնանք իրաւունքով պօսալ բոլորին թէ կուսակցական ու խմբակցական նեղմիտ ըմբռնումն է որ կը պտտի դարձեալ համազգային կազմակերպութեան մը շուրջ, որուն միակ քաղաքականութիւնը կը մնայ՝ ԾԱՌԱՅՅԵԼ:

Գ. ՇԱՀԻՆԵԱՆ

ՀԻՆԳ ՏԱՐԻ ԱԿԱՄԱՅ ԼՌՈՒԹԵՆԷ ՅԵՏՈՅ

Ինչպէս կարողացիք « Զ.Մ.Ը.Մ. » ամսաթերթին մէջ, հիմնադիրներ, մարդիկներ եւ սկաուտներ ի մի եկած, ի զին ամէն զոհողութեան, կ'ուզեն վերակենդանացնել այդ համադրային Միութիւնը: Զ. Մ. Ը. Մ. ի Առժամեայ Կեդրոնական Մարմինը, հետեւելով իր նախորդներուն օրինակին, իր ամենամեծ հողերէն մին ըրած է հաւաքել իր զբօշին տակ զաղթաշխարհի մէջ գտնուած բոլոր պատանիները եւ երիտասարդութիւնը, դաստիարակել զանոնք հայկական ողիով, աղնուացնել անոնց մարմինը, միտքը եւ բարոյականը:

Իր այս նպատակին հասնելու համար դիտենք թէ ան կանգ չպիտի առնէ նիւթական թէ բարոյական որեւէ զոհողութեան առջեւ: Բայց չի բաւեր. դուրսը գտնուած երիտասարդութիւնը եւ մանաւանդ ծնողքները պէտք է ձեռք ձեռքի տան ամէն կարելի միջոցներով աջակցելու համար անոր:

Սաչաձեւումները վտանգաւոր են, եւ աւելին, դաւաճանութիւն է որ կը կատարուի հայ ժողովուրդին հանդէպ: Ինչո՞ւ կազմել միութիւններ մարդական կամ սկաուտական՝ զանազան անուան տակ, եւ ինչո՞ւ չլարել ուժերը ու խորթ աչքով նայիլ մէկգմէկու: Չէ՞ որ վերջ ի վերջոյ նպատակը մէկ է. գործ մը որ մեր սեփականութիւնը չէ, համադրային է:

Իբր սրտցաւ Զ.Մ.Ը.Մ.էնական կոչ կ'ընեմ այդ բոլոր անջատականներուն, ըլլան կուսակցական թէ այլ կազմակերպութեանց անունին տակ, մէկ կողմ թողուլ անձնական եւ խմբակցական վէճերը, ի սէր հայ ցեղի աղնուացման, բոլորուիլ մէկ զբօշի տակ ու այսպիսով հասնել մեր նպատակին:

Սաչաձեւումներ ըսի, վասնոր ինչպէս անցեալին մէջ նոյնպէս ներկայիս դեռ տեղի կ'ունենան անջատողական շարժումներ: Անցեալին՝ կուսակցութիւն մը աշխատեցաւ ձուլել իր մէջ Զ.Մ.Ը.Մ.ը: Անշուշտ սխալ մըն էր որ գործուեցաւ: Չեմ ուզեր

պատմութեան խորը մտնալ: Բայց հետեւածնքը: Քանի մը տասնեակ սկաուտներ բաժնուեցան խախտելով սկաուտական ողին եւ անոր սկզբունքները, իւրացուցին ինչ որ Զ.Մ.Ը.Մ. ի կը պատկանէր, օգտագործելով անոր վարկը իրենց ծուռ հաշիւներուն համար, ու մինչեւ վերջ, խուսափելով հաշիւ տալէ: Արդի՞ւնքը: Մնացին ինչ թիւով որ բաժնուեր էին, եւ անկասկած մինչեւ վերջն ալ կը մնան այդքան:

Անցեալները աչքիս զարկաւ Մարտիլիոյ մէջ, կուսակցութեան մը անունով սկաուտներ: Մի՞թէ սա ալ նոր խաչաձեւում չէ:

Իմ կարծիքով բոլոր պատանիները եւ երիտասարդութիւնը պէտք է նախ բոլորուն ինչ Զ.Մ.Ը.Մ. ի զբօշին տակ, դաստիարակուին, մարդուին, աղնուանան միտքով եւ նկարագրով ու յետոյ այդ հասունցած երիտասարդը որ դատելու եւ զանազանելու կարողութեան տիրացած է, կ'ընտրէ իր ուղղութիւնը, եւ այն ատեն է որ նա օգտակար մէկը կը դառնայ այս կամ այն կուսակցութեան ու միութեան զործերուն մէջ:

Նման անջատողականութիւն սխալ եւ աններելի է՝ վասն զի, Զ.Մ.Ը.Մ.ը կուսակցական վէճերէ հեռու համադրային միութիւն մըն է, եւ մարմնակրթանքը ազդութիւն չունի, ինչպէս ժամանակին կոմիտաս Վարդապետը կ'ուզէր թուրքերէն երգ սորվեցնել. բոլորս մէկ բողոքեցինք եւ չէինք ուզեր մասնակցել այդ գասերուն, բայց Վարդապետը բացատրեց թէ զեզարուեստը ազդութիւն չունի եւ մեզ համոզեց: Այսպէս ալ մարմնակրթութեանքը ազդութիւն չունի, բայց մեր մէկ տարբերութեամբ որ օտարութեան մէջ ճերմակ ջարդին դէմ, անհրաժեշտ է պատնէջ մը կանգնել, եւ այդ պատնէջներէն մէկն ու ամենէն ամուրը Զ.Մ.Ը.Մ.ը կրնայ ըլլալ:

Ուրեմն, ըմբռնելով մեր պարտականութեան ծանրութիւնը, եւ համոզուած որ

ՏԱՅ ՍԿԱՈՒՏ

ՍԿԱՈՒՏԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ

(Շարունակութիւն Ախտորդ քիւէն)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի՞նչ պէտք է զխոնայ սկառուտ մը, յաջողութեամբ անցնելու համար իր քննութիւնը:

Անասուններու վերաբերեալ՝ զխոնայ ինչ որ կարելի է անոնցմէ սորվիլ, անոնց հետքերուն հետեւելով, սողալով մինչև անոնց մօտիկը, զանոնք զիտելու համար, առանց սակայն տեսնուելու, որպէսզի հասու ըլլաք անոնց կենցաղին:

Անասունները պէտք չէ սպաննէք, մինչև որ ուտեստի նեղութիւն չունենաք: Սկառուտ մը երբէք չի սպաններ, սպաննած ըլլալու հաճոյքին համար, եթէ վտանգաւոր անասունի մը առջև չգտնուիս:

Անրնդհատ զիտելով ազատ մնացած անասունները, մարդիկ կը մղուին այնքան սիրելու զանոնք, որ իվերջոյ՛, կը խրտչին զանոնք սպաննելէ:

Որսորդութեան ամբողջ հաճոյքը անոնց հետքերը երեսան հանելուն մէջ է եւ ո՛չ թէ զանոնք սպաննելուն մէջ:

Չի բաւեր հետքերը տեսնել. պէտք է անոնց իմաստը կարգալ զիտնալ, — կենդանին ի՞նչ բնթացքով կը քալէր, վախի մէջ էր թէ հանդարտ, եւ այլն: Որսորդը զիտէ իր ճամբան զտնել անապատին մէջ թէ խիտ անտառին մէջ. կը ճանչնայ այն

պտուղներն ու արմատները որ կ'ուտուին, կամ անասունները կը փնտռեն զանոնք եւ կամ կը ծառայեն զանոնք հրապուրելու:

Նոյնպէս, քաղաքակիրթ երկրի մէջ, պէտք է վարժուինք կարգալու հետեւակներու, ձիերու եւ հեծանիւններու եւայլն, հետքերը, եւ այդ հետքերով երեսան հանել բոլոր տեղի ունեցածը. կարգ մը նըշաններ, ինչպէս երբ թռչուն մը որ յանկարծ կը թռի, կ'երթայ, ձեզ պիտի իմացընէ թէ մէկը կը մօտենայ, թէ եւ դուք չէք տեսներ զայն:

Գետինը զիտելով, յաճախ պիտի գտնէք կորսուած առարկաներ, զոր պիտի կրնաք վերադարձնել իրենց տէրերուն:

Դիտելով մարդոց կեցուածքն ու հանդերձանքը, եւ ձեր զիտողութիւնները իրարու մօտեցնելով, պիտի տեսնէք երբեմն, թէ լաւ մտածող մարդու մը հետ չէ ձեր զործը եւ այդպէս, պիտի կրնաք առաջքն առնել ոճիրներու, պիտի կրնաք տեսնել թէ ո՞վ նեղութեան մէջ է եւ անոր բերել ձեր օգնութիւնը կամ համակրանքը, եւ այդպէս, սկառուտի ձեր դըլխաւոր պարտականութիւններէն մէկը կատարել, — օգնութեան հասնիլ անոնց որ պէտք ունին:

Յիշեցէք թէ Սկառուտի մը համար ամօթ

մեզնէ հեռու եւ անջատ գործողները ոչ միայն կը խախտեն այնքան բաղձալի միութեան ու գործակցութեան հիմերը, այլ անջատումին իրր բնական հետեւանք, կիրք, հակամարտութիւն եւ ուժերու անտեղի վատնում կը պարտադրեն, վճռա-

պէս մէկզի պիտի նետենք անցեալի վէճերը, պիտի հաւաքուինք մէկ դրօշի տակ՝ իրր ազգային միութեան խորհրդանշան, եւ գործենք ըստ այնմ, հասնելու համար ձեր նատակին:

Գ. ՄԵՐՃԱՆՕՅ

է ընկերասնալ մէկու մը, որ մեծ թէ պըզտիկ, մօտաւոր կամ հեռաւոր, երկրի վըրայ թէ օդին մէջ՝ կը զիտէ բան մը զոր ինքը չէ տեսած :

Բնականաբար, Սկաուտները պէտք է որ զիտան բաց օդին սպրիլ, իրենց համար հիւզեր կամ վրաններ կանգնեցնել, կրակ վառել, մորթել, կտոր կտոր ընել եւ եփել իր կերակուրը, կոճղեր հաւաքել՝ անոնցմով կամուրջ եւ լաստ շինելու համար, անձանօթ երկրի մը մէջ՝ զիշեր թէ ցերեկ ճամբան գտնել, եւ ալլն :

Բայց շատ քիչերը կը յաջողին սորվիլ այս բաները եւ իրենք զիրենք մարդն՝ քաղաքակիրթ երկիրներու մէջ : Անոնք՝ իրենց արամադրութեան տակ ունին հանգըստաւէտ բնակարաններ, անկողիններ, իրենց ուտելիքը պատրաստողներ կան եւ իրենց ճամբան գտնելու համար, կը զիտեն քաղաքապահ ոստիկանի մը որուն կը հարցնեն :

Անոնք սակայն, երբ գիւղ կ'երթան եւ կը փորձեն Սկաուտի մորթին մէջ մտնել, գժուարութեան կը բախին :

Առէք նոյնիսկ ըմբիշ մը եւ դայն տարէք Արիփկէի հարաւը, ամայլ վայր մը եւ ըսէք իրեն որ զխուն ճարը նայի : Իր արհեստը եւ իր սպիտակ շապիկը մեծ բանի չպիտի ծառային : Հոն, անիկա պիտի ներկայանայ նորեկի մը անճարակութեամբ, որուն վրայ պիտի խնդան, քանի չէ սորված սկաուտի արհեստէն եւ զիտութենէն բան մը :

Եւ այս զիտութենէն, զիտէ՞ք, կարելի է օգտուիլ բոլոր ասպարէզներուն մէջ :

Ձեր բոլոր տղոց՝ պատրաստել եւ վառել տուէք կրակ մը : Երբ ամէն մէկը իր զիտցած ձեռով փորձէ առանց յաջողելու, ցոյց տուէք անոնց թէ ինչպէ՞ս պէտք է ընել, (քանի մը չոր տաշեղներ եւ շիւղեր բրդածեւ) : Սկսել տուէք : Իրենց ցոյց տուէք նաեւ հանգըստներ ընելու եղանակը. (Գլուխ Գ.) :



Ասպետութիւն.— Ասպետները անցեալ ժամանակներու Սկաուտներն էին եւ անոնց կանոնները զրեթէ մեր այսօրուան կանոններն էին : Մենք անոնց յաջորդներն ենք, պէտք է որ պահենք անոնց բարի համբաւը եւ քալենք անոնց հետքերուն վրայէն :

Պատիւը՝ անոնց համար՝ ամենէն նուիրական բանն էր : Չէին հաւանք կատարելու գործ մը՝ որ պատուարեր չէ, ինչպէս զողնալ կամ ստել. պիտի նախընտրէին մեռնիլ : Միշտ պատրաստ էին կուռելու եւ սպաննուելու՝ պաշտպանելու համար իրենց հայրենիքը, կրօնքը կամ պատիւը : Անոնք հազարներով մեկնեցան դէպի Պաղեստին, Երուսաղէմ, պաշտպանելու համար քրիստոնէական կրօնքը՝ ընդդէմ մահմետական թուրքերուն :

Ասպետ մը՝ միշտ իր հետ ունէր փոքր խումբ մը, ձիավար մը, մէկ քանի զինակիրներ, ինչպէս մեր խմբասպետներն ունին իրենց օգնականը եւ 4 կամ 5 սկաուտներ :

Ասպետի մը խումբը՝ կեանքի եւ մահուան զինով հաւատարիմ էր անոր. բոլորը կը մտածէին իրենց պետին նման :

Իրենց պատիւը նուիրական էր իրենց համար : Հաւատարիմ էին իրենց պետին, մեծաւորներուն, եւ հայրենիքին :

Անոնք, մասնաւորաբար, շատ բարեկիրթ էին կիներուն, տղոց եւ անկարներուն հանդէպ :

Կ'օգնէին բոլորին :

Իրենց զրամբ եւ հացը կուտային կարօտեալներուն եւ կը խնայէին, որպէսզի կարենան այդպէս ընել :

Ձէնքի զործածութեան կը վարժուէին, որպէսզի պաշտպանեն իրենց դաւանանքը եւ իրենց երկիրը թշնամիին դէմ :

Անոնց ծրարքին կարեւոր մէկ կէտն էր այն որ, ամէն օր, պարտաւոր էին ծառայութիւն մը մատուցանելու մէկուն :

Եւ ատիկա կը մնայ այսօր մասնաւանդ՝ սկաուտութեան կանոններէն մէկը :

Երբ առտուն կ'արթննաք, յիշեցէք թէ, օրուան մէջ՝ պէտք է որ մէկուն ծառայութիւն մը մատուցանէք. հանդոյց մը բռնէք ձեր թաշկինակին կամ ձեր փողկա-

պին վրայ, ձեռքէք որ հանդոյցը ձեր զըր-
պանէն կախած մնայ, որպէսզի յիշէք
և իրիկունը. երբ պառկիք, մտածեցէք
անոր որուն ծառայութիւն մը մատուցիք:

Եթէ պատահի որ մոռնաք, յաջորդ օրը
երկու բարի գործ կատարեցէք: Մի մոռ-
նաք որ Սկաուտի ձեր խոստումը՝ ձեր
վրայ պատուոյ պարտք կը դնէ օրական
այս ծառայութիւնը մատուցանելու որեւէ
մէկուն:

Ծառայութիւն մատուցանել՝ չի նշանա-
կեր մեծ գործեր տեսնել: Մարդ կրնայ
պզտիկ բաներով ալ օգտակար ըլլալ, ինչ-
պէս աղքատներուն ողորմիլ, օգնել պա-
տաւ կնոջ մը որ կտրէ անցնի փողոցէն,
ջուր տալ ծարուրցած ձիու մը, մայթին
վրայէն վերցնել պտուղի կեղեւներ՝ ու-
րոնք կրնան մէկը սահեցնել և այլն:

Բայց, ամէն օր, պէտք է այդ ծառա-
յութիւնը մատուցանել:

Հրահանգ խմբապետներուն. — Ձեր
սկաուտներուն հանդոյց մը ընել տուէք,
որպէսզի յիշեն թէ յաջորդ օրը ծառայու-
թիւն մը ունին մատուցանելիք:



ԱՋԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. — Ծառ երկիր -
ներու մէջ՝ շքանշաններ և պատուանշան-
ներ կը արուին այն զինուորներուն, ու-
րոնք թշնամիին կրակին տակ նշանակելի
գործ մը կը կատարեն:

Նոյնպէս՝ անոնց որ մարդկային կեան-
քեր կը փրկեն մեծ աղէտներու ընթաց-
քին, հրդեհ, վրուզում, հանքի արկած -
ներ և այլն, կամ առօրեայ դժբախտ պա-
տահարներու մէջ և կը կարծեմ թէ՝ ա-
սոնք նուազ հերոս չեն քան զինուորները,
որոնք ճակատամարտի խանդավառութե -
նէն մղուած՝ առաջ կը նետուին, վտանգ-
ուած ընկեր մը փրկելու համար:

Սկաուտութեան հաստատումէն ի վեր,
բարձրագոյն են անոնք որ արժանացան
փրկարարութեան պատուանշանի:

Ձեզմէ շատերը առիթը պիտի ունենան

կեանք մը փրկելու: Գլխացէք չփախցնել
նման առիթ մը, պատրաստուեցէք անոր,
սորվեցէք թէ ի՞նչ կարելի է ընել երբ ար-
կած մը պատահի, պատրաստ եղէք ըստ
այնմ շարժելու և այդպէս ալ ըրէք:

Ձի բաւեր դրբերու մէջ կարգալ և
կարգալ և կարծել թէ պիտի կրնաք գոր-
ծել, երբ հարկը պահանջէ. պէտք է որ
վարժուիք անհրաժեշտը ընելու: Քիթ -
բերան ծածկել թաց թաշկինակով մը,
մուխին մէջ շնչել կարենալու համար,
սաւան մը պատուել՝ անով պարան շինե-
լու և հրդեհի պարապային փախչելու
համար, գիտնալ թէ ինչպէ՞ս պէտք է
վերցնել և փոխադրել նուազած մէկը,
ինչպէս բռնել, փրկել և կեանքի բերել
խեղդուած մէկը, և այլն:

Երբ այս բոլորը սորվիք, դուք ձեր վը-
րայ վստահութիւն պիտի ունենաք և ար-
կածի մը պահուն, երբ ամէն մարդ խելքը
կորսնցուցած կ'ըլլայ, առաջ կ'անցնիք և
կ'ընէք ինչ որ պէտք է:

Ձեր սկաուտներուն սորվեցուցէք
վերցնել և փոխադրել մարած մէկը,
դայն դուրս քաշել մուխով կամ կազով
լեցուած վայրէ մը: Անոնց սորվեցու -
ցէք քիթ-բերան զոցել թաց թաշկինա-
կով մը: Վարժեցուցէք զանոնք երկու-
ական հողինոց խմբակներով, որպէսզի
փոխն ի փոխ կատարեն մէկը մարած
մարդու, միւսը ազատարարի դերերը:



ՏՈՎՈՒՆՈՒԹԻՒՆ. — Սկաուտի պար -
տականութիւնները լրիւ կարենալ կատա-
րելու համար, պէտք է առօրէ ըլլալ, գոր-
ծունեայ և առողջ: Կարելի է այդպէս ալ
ըլլալ, եթէ քիչ մը ջանք թափենք: Բայց
ստիկա կը պահանջէ շատ մարդանք ընել,
խաղերուն մասնակցիլ, վազել, քալել, և
այլն:

Սկաուտ մը յաճախ կը ստիպուի դիշերը
անցընել բաց օդին և անոնք որ սովորու-
թիւն ըրած են պատուհանները դոց պառ-
կիլ, հաւանաբար, առաջին անգամ որ

փորձեն «ընդ աստեղօք» քուն քաշել, պաղառութենէ կամ յօդացաւ պիտի բռնուին:

Պէտք է ուրեմն, միշտ, ամառ թէ ձմեռ, պատուհանը բաց պահելի, այդպիսով, երբէք հարբուի չէք ըլլար:

Առտու իրիկուն, քիչ մը շուտահան մարզանք կամ ժիւ-ժիպու—պատուական միջոց մըն է, ոչ թէ միայն աղուոր մըկաններ շինելու, այլ մանաւանդ կանոնաւոր դործունէութեան մղելու համար ներքին գործարանները (այս կէտը մանրիւս - մասնօրէն բացատրել տղայոց) եւ կանոն - նաւորելու համար արեան շրջանը:

Շատ կարեւոր է, նոյնիսկ եթէ լողանք չկարենանք առնել, թաց սրբիչով մը շրփել մորթը ամէն օր:

Պէտք է շնչել քիթով եւ ոչ թէ բերնով: Այդ կերպով քիչ կը ծարաւիք, քիչ շունչ կը սպառէք, եւ կը խուսափիք օդին մէջ վխտացող հիւանդութեան սերմերը եւ միքրօպները կուլ տալէ. դիշերներն ալ չէք խոկար, ինչ որ ձեր ներկայութիւնը կրնայ մատնել թշնամիին:

Շնչառական մարզանքը շատ կարեւոր է թոքերը զարգացնելու եւ արեան տալու համար թթուածինը որուն պէտք ունի(*)

Շնչառական մարզանքը պէտք է կատարել բաց օդին եւ առանց չափը անցնելու, ինչ որ կրնայ սրտի վնասել: Դանդաղ եւ խոր ներշնչել քիթէն, եւ ո՛չ թէ բերնէն,

(*) Քիչ ատենէն կը սկսինք շնչառական մարզանքի վերաբերեալ յօդուածներու շարքի մը...

յետոյ, մէկ վայրկեան վերջ դանդաղօրէն արտաշնչել, առանց ճիւղի:

Իայց, շնչառական լաւագոյն մարզանքները կը կատարուին լաւ մը վաղէկ յետոյ:

Այսօր, այլեւս բոլորը կ'ընդունին թէ ալքօլը բոլորովին անօգուտ է առողջութեան համար եւ թէ անոր չափազանց դործածութիւնը հաւասար է նոյն չափով թոյն առնելու: Մէկը որ սովորութիւն քրած է մեծ քանակութեամբ ամէն օր խմել պարեջուր, զինի կամ ուրիշ ըմպելիներ, որեւէ օգուտ չունի սկառտութեան եւ ո՛չ ալ մեծ բան մը կրնայ ընել ուրիշ որեւէ գործի մէջ:

Նոյնպէս, ծխամոլներուն համար: Զինուորական լաւագոյն դէտերը չեն ծխեր, որովհետեւ, ծուխը կը վնասէ անոնց աչքին: Ծխախտոր երբեմն, մարդը կը դարձնէ ջղային եւ դիւրադրդիւ, կը խաթարէ հոտառութիւնը, որ մեծ կարեւորութիւն կը ներկայացնէ դիշերային գնացքներու մէջ, եւ գլանիկին կամ ծխամորճին կրակը ու հոտը որ կը բարձրանայ ծուխին հետ, կրնայ ձեր ներկայութիւնը մատնել թշնամիին: Երբէք երիտասարդ մը չի ծխեր անոր համար որ ատիկա իրեն հաճոյք կը պատճառէ, այլ որովհետեւ, ատիկա իրեն կուտայ չափահաս մարդու մը երեւոյթը: Իրականութեան մէջ, պարզապէս ծիծաղելի կը դառնայ:

Տղայոց ցոյց տուէ՛ք ժիւ-ժիպուի կամ շուէտական մարզանքի մէկ քանի շարժումներ սկսելու համար: Նոյնպէս շնչառական մարզանքի համար:

ՍԿԱՌԻՏԸ ԲԱՐԵԿԻՐԹ Է

ԵԹԷ ԿՈՒԶԷՔ ՈՐ ԶԵՐ ՏՂԱՆ ԸԼԼԱՅ ԲԱՐԵԿԻՐԹ,
ՅԱՆՁՆԵՑԷՔ ԶԱՅՆ Է. Մ. Ը. Մ. Ի ՍԿԱՌԻՏ ԽՈՒՄԲԵ-
ՐՈՒՆ:

ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Հայրենասիրութիւնը դիտակից եւ լուրջ տղոց ամենէն մեծ եւ նուիրական պարտականութիւններէն մէկն է:

Ամէն մարդ, ինչ ազգի ալ պատկանի եւ աշխարհի որ մասին մէջ ալ գտնուի, պարտաւոր է սիրել իր հայրենիքը:

Բայց հայ տղան, ուր որ ալ գտնուի, ինչ պիսյամաներու մէջ ալ ապրի, պէտք է բոլոր ուրիշ ժողովուրդներու անհատներէն աւելի սիրէ իր ազգը եւ իր հայրենիքը:

Ինչո՞ւ սակայն: Արդեօ՞ք մեր ազգը շատ աւելի բարձր է, շատ աւելի մեծ յատկութիւններ ու շատ աւելի փառաւոր անցեալ մը արձանադրած է քաղաքակրթութեան պատմութեան մէջ քան ուրիշ ազգեր...:

Արդեօ՞ք մեր հայրենիքը շատ աւելի հարուստ, շատ աւելի զեղեցիկ ու հմա - յիչ է քան ուրիշ որեւէ երկիր:

Ո՛չ: Այդ ըսել չենք ուզեր:

Մենք ալ ուրիշ որեւէ ժողովուրդի հաւասար ժողովուրդ ենք: Մեր հայրենիքը իր աշխարհադրական կառուցուածքով, իր բնական տեսարաններով աւելի զեղեցիկ չէ քան ուրիշ որեւէ երկիր:

Ձգենք որ մարդ իր հայրենիքը չի սիրեր միայն ու միայն անոր զեղեցիկութեան համար:

Բայց հայ տղան պարտաւոր է իր ազգը եւ իր հայրենիքը սիրել ուրիշ բոլոր ժողովուրդներու դաւակներէն աւելի:

Որովհետեւ, ուրիշ ոչ մէկ ժողովուրդ այնքան տառապեցաւ իր գոյութիւնը պահպանելու համար, որքան հայ ժողովուրդը:

Ուրիշ ո՛չ մէկ ժողովուրդ այնքան զոհարեցաւ իր հայրենիքը վերադանելու համար, որքան հայ ժողովուրդը:

Ամէն մէկ ողջ Հայու մտքին մէջ՝ տասնեակ մը սպանեալներու տխուր յիշատակը կը հսկէ տակաւին:

Մեր Հայրենիքին ամէն մէկ թիղ հողը՝ զոհի մը արիւնով ներկուած է:

Եօթը դար ամբողջ, հայ ժողովուրդը ճանչցաւ զարհուրելի բռնութեան մը բոլոր կաշկանդումները: Չմնաց հալածանք որուն չենթարկուէր: Վաճառական, արհեստաւոր, մշակ թէ բանուոր, Հայը ի՛նչ դասակարգի ալ պատկանէր կրկին կը կողոպտուէր կառավարութեան կողմէ պաշտօնապէս՝ շնորհիւ շատ ծանր եւ անարդար տուրքերու, որոնք հայ աշխատաւորին արդար վաստակը կը հոսեցնէին շրտայլ ու կամայական պետութեան մը ծակ գանձին մէջ, — աւաղակներու կողմէ՝ որոնք պետութեան պաշտպանութիւնը կը վայելէին եւ մանաւանդ, պետական պաշտօնատարներու կողմէ՝ որոնց սպորուտի լաւագոյն ազդեցութիւնն էր՝ կողոպուտ եւ կաշտք:

Հայը միշտ եղած է ազատատենչ ժողովուրդ մը: Ան երբէք չէ հանդուրժած իր պատմութեան ընթացքին, որ որեւէ բռնաւոր, ինչ ազգի ալ պատկանի, նոյն իսկ ըլլայ հայ, կապտէ իր մարդկային տարրական իրաւունքները: Հայը կը սիրէ աշխատիլ, արտադրել, չէնցնել իր տունն ու տեղը, երկիրը ուր կը բնակի, բայց չի հանդուրժեր որ զինքը զրկեն իր արդար վաստակէն:

Ան նախանձախնդիր է իր պատուին: Կը յարգէ ուրիշին նուիրականութիւնները: Թող չի տար որ իր պատիւը ազարտեն:

Հայը նաեւ, աշխարհի ամենէն խաղաղ ժողովուրդներէն մէկն է: Կը խուսափի կռիւ յարուցանելէ: Բայց երբ զինքը ըստիպեն պաշտպանել իր կեանքը, պատիւը, իր աշխատանքն ու իր արտադրութիւնը, կը կռուի առիւծի քաջութեամբ:

Այսպէս է որ դարաւոր բռնութեան մը հալածանքին խաղաղ միջոցներով դիմադրելէ, պետութեանց ղիմումներ կատարելէ եւ անոնց միջամտութիւնը խրնդրելէ յետոյ, երբ տեսաւ որ բռնութեան դէմ՝ մարդկային իրաւունքներու պաշտպանութեան լաւագոյն միջոցն է ապաստանիլ իր սեփական ուժին, բռնաւոր

Թուրքը այս անգամ առիթը յարմար նկատեց՝ իր զազանային ախորժակներուն եւս յագուրդ տալու:

Ջարդեր կազմակերպեց. թոյլ տուաւ որ մոլեռանդ խուժանը անպատիժ սպաննէ անոցն ու անպաշտպան կիներ, մանուկներ եւ ծերունիներ: Թոյլ տուաւ որ բացէ ի բաց թալանեն շայտոց բնակարանները, վաճատատունները, հանրային հաստատութիւնները, դպրոցներ, եկեղեցիներ, դարաւոր վանքեր՝ ուր հին քաղաքի թուրքեան մը պատմական փաստաթուղթերուն քով կը հանդէսին՝ արժէքաւոր, զեղարուեստական հրաշալիքներ:

Թուրքը՝ դարաւոր բռնատիրութեան մը ընթացքին՝ վարժութիւն ձեռք ձգած էր իր կամքին ենթարկուած տեսնելու արապետեալ ժողովուրդները, զանոնք աշխատեցնելու եւ ճոխ ապրուստ մը ապահովելու ինքզինքին՝ կողոպտուով:

Չէր կրնար հանդուրժել որ րալլան, այլակրօն ստրուկը զլուխ բարձրացնէ եւ զէնքի ուժին զիմէ իր տարրական իրաւունքները պաշտպանելու համար:

Որովհետեւ, ստրուկ ժողովուրդներու (եւ անոնց կարգին հայութեան) ազատագրուիլը կը նշանակէր՝ Թուրքը զրկել անոնց աշխատելու ճոխ ապրելու միջոցներէն, ծոյլ ու մեղկ կեանքի մը ախտաւոր հաճոյքներէն:

Կը նշանակէր՝ Թուրք կայսրութիւնը՝ որ կազմուած էր զանազան ժողովուրդներու հայրենական հողերու բռնագրաւումով, քայքայման դատապարտել:

Ու վտանգը՝ կանխելու միակ ու լաւագոյն միջոցն էր բնականաբար... անխնայ ջարդել կիներ ու մանուկներ, հալածել կտրիճներ եւ աւելի եւս սաստկացնել բռնութիւնը:

Բայց հայ ժողովուրդը գիտցաւ զէն ի ձեռին իր իրաւունքները պաշտպանել:

Մենք հետզհետէ ձեզ պիտի տանք այդ հերոսական պաշտպանութեան զեղեցիկ դրուագներէն կարեւորները:

Յաջորդաբար, ձեզ պիտի ներկայացնենք երկու մեծ պատերազմներու մէջ՝ հայ ժողովուրդին բերած մասնակցութիւնը՝

ըն՝ ընդդէմ բռնատիրութեան ուժերուն, եւ մանաւանդ հայկական քաջարի բանակներուն դորձունէութիւնը:

Մինչ այդ, հարց տուէք ձեր ծնողքներուն, ձեզ պիտի պատմեն թէ ինչպէ՞ս թրքական բռնատիրութիւնը՝ միանգամ ընդմիշտ թաղելու համար հայ ժողովուրդին արդար պահանջները, փորձեց արմատախիլ ընել ամբողջ ազգը: Թուրք ասիականներու արիւնահեղ սուլթաններուն րապտոնալիքին տակ, զիւրեր ու քաղաքներ պարսպուեցան: Այրերը՝ երիտասարդներ ու հասուն մարդիկ՝ զինուորական ծառայութեան պատրուակին տակ՝ հեռացուեր էին իրենց տուներէն: Հայ ժողովուրդը՝ զրկուած իր պաշտպան բազուկներէն՝ ամբողջովին յանձնուած կը մնար Թուրքին արիւնուշտ ախորժակին: Մնացեր էին կիներ, մանուկներ, ծերունիներ եւ հիւանդ ու տկար՝ ցանցաւ թիւով երիտասարդներ: Այս անտէր խեղճերն էին որ կը բռնէին բռնապաշտի անձանոթ ու վրտանդաւոր ճամբաները՝ Մարմարայի ու Սեւ Ծովու եզերքներէն մինչեւ արարական անապատի խորքերը՝ մեռնելու համար անօթի, ծարաւ, յոգնարեկ կամ սպաննուելու համար անլուր խժժութեամբ:

Այս անգամ, ամբողջ ազգը կողոպտուեցաւ պաշտօնապէս Թուրք կառավարութեան կողմէ: Այս անգամ Թուրք կառավարութիւնն էր որ պաշտօնապէս կ'աքսորէր ու կը ջարդէր հայ ժողովուրդը:

Նպատակը այս ոճրային գործողութիւններուն, որոնց նմանը չէ տեսնուած պատմութեան մէջ:

Վերջ տալ հայկական հարցին:

Եւ ատոր համար, Թուրքը կը փորձէր ողջ մարդկութեան ցանկէն ջնջել հայ անունը եւ առաջին հարուածը տալով հայ մտաւորականութեան եւ առաջնորդ տարրին, կարծեր էր զլիսատել ժողովուրդը:

Բայց ամենէն վարպետ ու նրբամիտ ոճրագործն իսկ, զոնէ մէկ անգամ կը սխալի իր չարաղէտ հաշիւներուն մէջ եւ Թուրքը որ ամենէն վայրագ ու դարձելի ոճիրն էր յղացեր, մոռցեր էր որ Հայր օտտուած է անզլիսատելի, անխոցելի հողիով մը:

Եթէ թուրքը վճուր էր բնաջնջել Հայը, Հայը սակայն չէր որոշած մեռնիլ, չէր որոշած անձնասպան ըլլալ եւ ահա, այսպէս էր որ մահուան դատապարտուած հայութիւնը, տեղ տեղ կը կազմակերպէր ոճիրին դէմ իր դիմադրութիւնը:

Ուրֆա, Վան, Գարահիսար, Մուսա Լեռ, կը մնան Ոճիրին դէմ հայկական փառայեղ դիմադրութեան յուշարձաննե՛րը՝:

Բայց, չէր բաւեր ոճիրին դիմադրել: Պէտք էր կարել ոճրադործին ձեռքը, պէտք էր արդար պատիժի սարսափին տակ սմբեցնել ոճրադործն, ու մահապարտ հայութեան կմախացած զաւկընե՛րը՝ վրէժի կարմիր դրօշին տակ կը խրմբուէին Կովկասէն մինչեւ Վան, Պիթլիս ու մինչեւ սուրիական սահմանները:

Չէր բաւեր սակայն միայն վրէժ լուծել, վրէժը որքան ալ արդար ըլլայ, եթէ չի ծառայեր վերջնական նպատակի մը՝ չի կրնար արդիւլել ոճիրին կրկնութիւնը: Պէտք էր ուրեմն, ոճրադործին ու հայ կեանքին միջեւ կանգնեցնել ասպանութեան անանց պատնէ՛շներ:

Ատիկա, կարելի էր միայն ու միայն հայկական հայրենիքի վերահաստատու՝ մովմիջազգային օրէնքներով ճանչցուած, հայկական պետականութեան վերակազմութեամբ:

Այդ բանը կատարուած է այսօր: Հայ ժողովուրդին արիւնալի զոհողութիւնները եւ հայրենասիրական յամառ մաքառումները պսակուած են:

Հայը այսօր՝ ունի իր սեփական հայրենիքը, իր կառավարութիւնը:

Սովետ. Հայաստանը՝ այլեւս՝ հայ ժողովուրդին հաւաքական զոյութեան դէմ որեւէ վտանգի առջեւ, կը կաղմէ անխորտակելի պատնէ՛շ մը որ կողմէ՛ ալ դայ այդ վտանգը:

Գարեբէ ի վեր առաջին անգամ ըլլալով, Հայը իր երկրին մէջ կը վայելէ անխռով ասպանութեան բարիքները, առաջին անգամ ըլլալով՝ կ'աշխատի եւ կ'արտադրէ առանց իր արհեստանոցին մէջ՝ կողոպտուելու վախն ունենալու, առանց իր

զաշտին մէջ՝ իր իսկ մանդաղով խող՝ խողուելու սպառնալիքէն շտմելու:

Կ'աշխատի, կ'արտադրէ, կը շէնցնէ երկիրը, կը զարդանայ՝ հանրային դործունէութեան ու մշակոյթի բոլոր ճիւղերուն մէջ արձանադրելով՝ անօրինակ վերելքի մը փաստերը:

Բայց հայութեան մէկ մասը՝ փախուստ տալով թրքական վայրագ հալածանքնե՛րէն, տակաւին ցրուած կը մնայ աշխարհի շորս մտաբուն մէջ: Սուրիա, Յունաստան, Պուլհարիա, Ռումանիա, Թրանսսա, Ամերիկաները ունինք բազմանդամ զաղութներ՝ որոնք կը պատրաստուին բազմութեամբ վերադառնալ հայրենիք:

Հայաստան՝ ո՛չ միայն մեր զաղութներուն կ'ընծայէ վերադարձի եւ զուտ հայկական միջավայրի մէջ մարդավայել կեանքի պայմաններ, այլ եւ կը մնայ միակ իրաւադոր ուժը որ պիտի կարենայ իրականացնել հայութեան դարաւոր երազը, — թուրքէն առնել մեր հայրենական հողերը եւ հոն ամփոփել ու տեղաւորել ամբողջ հայութիւնը:



Հայ սկսուտը պարզ է որ կը սիրէ իր ազգը եւ իր հայրենիքը: Բայց, պարտաւոր է սիրել զանոնք շատ աւելի ջերմ ու անվերապահ սիրով, շատ աւելի մեծ զոհարելութեան ուղիով, քան իր հայրենիքը սիրող որեւէ օտար Սկսուտ:

Որովհետեւ, ուրիշ ո՛չ մէկ ազգ՝ իր զոյութեան պահպանման համար, այն քան տառապեցաւ ու հալածուեցաւ, որ քան Հայը:

Ուրիշ ո՛չ մէկ ազգ իր ազգային ինքնութեան պահպանման եւ իր իրաւունքներուն վերստացման ու ազատադրութեան համար, այնքան զոհողութիւններ յանձն առաւ որքան Հայը:

Եւ ուրիշ ո՛չ մէկ ժողովուրդ այնքան երկար առեւ կուրծք տուաւ բռնութիւններու, որքան Հայը:

Հայ Սկսուտը պէտք է ջանայ արժանաւոր յաջորդը ըլլալ իր հայրերուն, որոնք

զիտցան տոկալով ամէն տեսակ հալա -
ծանքի, զիմադրելով ամէն կարգի բռնու-
թեանց, անադարտ պահել հայ անունը, —
պահպանեցին հայութեան դոյութիւնը:

Հայ Սկաուտը պէտք է ինքզինքը հը -
պարտ զգայ՝ իրը զաւակն ու ժառանգոր-
դը ազնիւ ժողովուրդի մը, որ վերակեր-
տելու համար իր հայրենիքը՝ կանգ չա -
ռաւ որեւէ զոհողութեան առջեւ:

Հայ Սկաուտը՝ պարտաւոր է ամէն օր
պահ մը՝ մտածել ժողովուրդին վրայ որ-
մէ սերած է եւ հարց տալ ինքզինքին.

— Ինչպէ՞ս կրնամ այսօր օգտակար ըլ -
լալ հայ ժողովուրդին:

Հայ Սկաուտը պարտաւոր է ամէն օր
պահ մը մտածել իր հեռաւոր ու սիրելի
Հայրենիքին վրայ՝ ուր մեր քաջարի հայ-

րենակիցները՝ կ'աշխատին, կ'արտադրեն,
կը շէնցենն ու կը զարգացնեն մեր քա -
ղաքներն ու զիւղերը:

Հայ Սկաուտը պէտք է զիտնայ թէ իր
հայրենիքին մէջ՝ ամէն մէկ Հայ կ'աշ -
խատի ու կը դործէ ոչ միայն ինքզինքին,
— Հայրենիքին եւ այնտեղի բնակչու -
թեան, այլեւ հեռաւոր դաղթական Հայու
մը համար, որպէսզի երկիրը շէննայ,
զարգանայ եւ կարենայ իր սահմաններուն
մէջ ամփոփել ամբողջ հայութիւնը:

Ահա թէ ինչո՞ւ նաեւ, Հայ Սկաուտը
պարտաւոր է սիրել որեւէ մէկէն աւելի իր
Հայրենիքը եւ ամէն օր հարց տալ՝ ինք -
զինքին.

— Ինչպէ՞ս կրնամ այսօր ալ օգտակար
ըլլալ իմ հեռաւոր Հայրենիքիս:

Մ. Ե.



ՊԵՅՐՈՒԹ.— 1944ի միջմասնանիւրային խաղերու տոգանցքին՝
սկաուտական տեսարան մը

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐՔԵՐԸ ՄՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հ.Մ.Ը.Մ.ի սկսուտական խումբերուն մէջ մտնելու համար, պէտք է ներկայացնել ծնողական մասնաւոր արտօնադիր, եւ դիմում կատարել բնակավայրի սկսուտական խումբին: Այդ դիմումէն վերջն է որ տղաքը, մանչ թէ աղջիկ իրենց տարիքին համեմատ կը տեղաւորուին զանազան խումբերու մէջ:

— 8-12 տարեկան՝ Գայլիկ եւ Ծիծեռնակներ,

12-16 տարեկան՝ Կայտ եւ Սկսուտներ,

17էն վեր՝ Երէցներ:

Նոր դիմում կատարողները կը կոչուին Թեկնածու կամ կակուղ-տառիկ:

Թեկնածուն, սկսուտական տեղական խորհուրդին կողմէ արձանագրուելէ յետոյ, անոր որոշումով, կը յանձնուի խմբակի մը առաջնորդին, եւ նուազագոյն մէկ ամիս նորընծայի քննութեանց համար հրահանգուելէ եւ երեք արշաւներու մասնակցելէ վերջ միայն, կը սկսի անցընել նորընծայի քննութիւնը: Այդ միջոցին կրնայ կրել սկսուտական տարագ, առանց ունէ նշանակի:

ՆՈՐԸՆԾԱՅ ՍԿԱՌԻՏ մը՝ պարտի գիտնալ, բացատրել եւ զործադրել հետեւեալները. —

- 1) Սկսուտին՝ խոստումը, դաւանանքը եւ նշանաբանը:
- 2) Հետախուզական վեց նշանները եւ հանդոյցները:
- 3) Բարեւները եւ անոնց նշանակութիւնը:
- 4) Սկսուտական կարգերը, աստիճանները, տարազը, շարքերը, պաշտօնները եւ ճիւղերը:
- 5) Կանոնաւոր կերպով կատարել բնական եւ շուէտական մարզանքներու գլխաւոր փորձերը եւ կարգապահական վարժութիւնները, բերնով, ձեռքով եւ սուրիչով հրամանները:
- 6) Կողմնացոյցի ութը կողմերը:

7) Բաց օդին մէջ կրակ վառել եւ օճախ մը շինել:

8) Իր ցեղային ծագումը:

9) Արդի Հայաստանի սահմանները (դրացի երկիրները), գլխաւոր քաղաքները, լեռները, գետերը եւ լիճերը:

10) Բաժանորդագրուել «Հ.Մ.Ը.Մ.»-ին, կարգալ դայն. զբաւոր կերպով բացատրել դաւանանքէն երկու յօդուած:

11) Ազգային, միութենական եւ սկսուտական դրօշներու հանդամանքը, պարզելու, յարգելու եւ բարեւելու եղանակը:

12) Մարզկային մարմնոյն երեք բաժանումները եւ հինգ զղայարանքները:

13) Պահակի դրութիւն եւ պարտականութիւնները:

14) «Քիմի» խաղին ծագումն ու պատմութիւնը:

15) Վարժ կերպով պատէ, ձողէ, ծառէ եւ շուանէ մը մազլցելու կերպը:

16) Վեց ամսուան մէջ ներկայացնել առ նուազն երկու ձեռական աշխատանք:

17) Միութենական մտից, ամսական, ապահովագրութեանց եւ ինքնութեան տոմսի տուրքերը վճարած ըլլալ:

ԾԱՆՅԹ. — Սկսուտ մը 13 տարեկանը լրացնելէ եւ վեց ամիս նորընծայ մնալէ վերջ միայն կրնայ երկրորդ կարգի քննութիւնը անցընել:

Բացատրութիւն նորընծայի 17 սլայ-մաճնեքուն

1.— Սկսուտին խոստումը, դաւանանքը, նշանաբանը եւ կարգախօսը.—

ԽՈՍՏՈՒՄ. — Պատուոյս վրայ կը խոստանամ:

1) Ըլլալ հաւատարիմ Աստուծոյ եւ ծառայել հայրենիքիս:

2) Միշտ օգնել ուրիշին, եւ զործել իբր պարտականութեանը գիտակից արի եւ վիհանձն մարդ:

3) Հնազանդիլ հայ սկսուտի դաւանանքին:

ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻՆ ԴԱԻԱՆԱՆՔԸ

Մեր նախորդ քիւով, հակիրճ տուեր էինք միջազգային սկաւառական կազմութիւն տասնաբանեակէ: Այստեղ կը գտնէք էսայ սկաւառին դաւանանքը՝ մեկնաբանուած:

Ա.—ՍԿԱՌԻՏԻՆ ԽՕՄՔԸ ՆՈՒԻՐԱԿԱՆ է: Մարդու մը համար իր խօսքը իր պատիւնն է. իսկ սկաւառին համար, հիմը սկաւառական առաքինութեանց: Սկաւառին պատիւը կը ստիպէ զինքը արիարար ըսել, այն ինչ որ ճշմարիտ է: Երբ սկաւառ մը իր պատուոյն վրայ կը խոստանայ, ստիպուած է իր խոստումը յարգել: Եթէ ան ըսէ « պատուոյս վրայ կը խոստանամ », պէտք է հաւատալ իրեն, իսկ եթէ սկաւառի մը խօսքը տարակոյս կը վերցնէ, լաւ է որ ան բնաւ չկրէ սկաւառ անունը:

Բ.—ՍԿԱՌԻՏԸ ՀԱՒԱՏԱՐԻՄ ԵՒ ՈՒՂՂԱՄԻՏ է: Սկաւառը հաւատարիմ է Աստուծոյ, իր հայրենիքին, ծնողքին, ինչպէս նաեւ իր պետերուն, ուսուցչին, վարպետին եւ ՄԻՌԻԹԵԱՆ: Հաւատարիմ է նաեւ իր պարտականութեանց եւ անգամ մը որ ստանձնած է զայն, երբեք չի խուսափիր անկէ, եւ մինչեւ վերջը, առանց վարանումի կը կատարէ զայն ուղղամտօրէն: Սկաւառը իր վարքով եւ կենցաղով եւս վստահութիւն պէտք է ներշնչէ բոլորին: Ան հաւատարիմ է նաեւ նիւթապէս եւ բարոյապէս:

Գ.—ՍԿԱՌԻՏԸ ՀՆԱԶԱՆՎ Է: Սկաւառ մը զիտէ հնազանդիլ առանց դժկամակութեան իր ծնողքին եւ գերադասներուն հրամանին: Անոր համար առաքինութիւն մըն է, օրէնքին եւ սկաւառական կանոններուն հնազանդիլը: Սկաւառը, պարզ խօսքով՝ ճշմարիտ կանոնապահ մըն է: Սկաւառը կը հնազանդի նաեւ իր խղճին եւ թոյլ չի տար ինքզինքին յոռի եւ վնասակար արարքներու մէջ դտնուիլ:

Դ.—ՍԿԱՌԻՏԸ ՄԻՇՏ ԿՕԳՆԷ ՈՒՐԻՇՆԵՐՈՒՆ: Սկաւառը պատրաստ է իր հանգիստը եւ հաճոյքը զոհել ուրիշին բարիք մը ընելու համար: Որ եւ է պարագայի սկաւառ մը պիտի կարենայ նկատել թէ ի՞նչ բան լաւազոյն է ընել ուրիշներուն


համար, եւ պիտի կատարէ զայն: Օրուան մէջ զէթ անգամ մը ուրիշին օգտակար դործ մը կատարելը, սկաւառին պարտականութիւնն է:

Ե.—ՍԿԱՌԻՏԸ ԲԱՐԵԿԱՄ Է ԱՄԷՆՆԵՐՆ, ԵՒ ԵՂԲԱՅՐ ԱՄԷՆ ՈՒՐԻՇ ՍԿԱՌԻՏԻ՝ ԱՌԱՆՅ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԽԸՏՐՈՒԹԵԱՆ: Սկաւառը խորութիւն եւ զանազանութիւն չի դնէր իր նմաններուն միջեւ: Անոնց աւելի կամ պակաս հարուստ, խելացի կամ ուժեղ ըլլալը, պատճառ մը չէ որ, անոնք իրարու հանդէպ արհամարհանքով կամ նախանձով վերաբերուին: Թշնամութիւն, քէն եւ վրէժ-խնդրութիւն դոյութիւն չունին սկաւառին համար: Երբ սկաւառը բարիք մը կ'ընէ, խորութիւն չի դնէր անձերու միջեւ, որովհետեւ ամէնուն ալ հաւասարապէս բարեկամ է ան, իսկ երբ ուրիշ սկաւառի մը կը հանդիպի, հոգ չէ թէ օտար, անոր հետ կը վարուի, ինչպէս է եղբօրը հետ: Երբեք նշանակութիւն չունի իրեն համար թէ այդ սկաւառը օտար կրօնքի կամ դաւանանքի կը պատկանի:

Զ.—ՍԿԱՌԻՏԸ ԲԱՐԵԿԻՐԹ Է: Սկաւառը քաղաքավար է ամէնուն հանդէպ. կրթութիւնը ընտանիքի եւ ընկերութեան մէջ լաւազոյն կենցաղ մը ունենալու միակ պայմանն է: Անկրթութիւնը, անհասկացողութեանց, վէճի եւ կոխի ծնունդ կուտայ. կրթեալ մարդը ամէնուն սիրելի կ'ըլլայ, իսկ անկրթը՝ ատելի: Ամէն տեղ եւ ամէն առիթով սկաւառը երբեք չի կորսնցնէր իր բարեկրթութիւնը:

Է.—ՍԿԱՌԻՏԸ ՄԱՔՈՒՐ ՀԱՅԵՐԷՆԻ ԿԸ ԽՕՄԻ: Սկաւառը կ'աշխատի իր մայրենի լեզուն սորվիլ, որովհետեւ լեզուն զիտնալով աւելի կը սիրէ իր հայրենիքը: Սկաւառը ո՛չ օտար եւ ո՛չ ալ աղտոտ բաներ կը դործածէ, հայերէն խօսած ատեն:

Ը.—ՍԿԱՌԻՏԸ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ԿԸ ՍԻՐԷ ԵՒ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԷ: Սկաւառի մը խիղճը պիտի չհանդուրժէ չարչարել կենդանիները եւ զանոնք ի զուր տեղը սպաննել, եթէ անոնց կեանքը վնասակար չէ մարդկութեան: Իր հաճոյքին կամ զուար-



ճութեանը համար թուչուններու բոյնը չի քրքրեր:

Թ. — ՍԿԱՌԻՏԸ ԶՈՒԱՐԹ ԵՒ ԽԱՆԴԱՎԱՌ Է: Սկսուտը զուարթ է երբ իր պարտականութիւնը լիուրի կատարած է, զուարթ է երբ բարիք մը կը գործէ, զարձեալ զուարթ է երբ դժուարութեան մը կամ անյաջողութեան մը առջեւ կը դնուի:

Սկսուտին համար տրտնջալը անվայել է եւ ամենադառն ցաւն անդամ անիկա պէտք է դիմաւորէ ժպտողով մը: Դժբախտութեան, ցաւի եւ անյաջողութեան հանդէպ ժպտիլը մարդկային եւ սկսուտական լաւագոյն առաքինութիւնն է եւ շատ անդամ ալ յաջողութեան միակ պայմանը. սկսուտը դիտէ սակայն զսնադանել զուարթութիւնը թեթեւաբարոյութենէն:

Ժ. — ՍԿԱՌԻՏԸ ԱՇԽԱՏԱՍԵՐ ԵՒ ԿՈՐՈՎԻ Է: Սկսուտը աշխատութիւնը իրեն համար օրէնք կ'ընդունի եւ սովորութիւն կ'ընէ: Ան իր կեանքին ամէն մէկ ժամը կը ջանայ արդիւնաւոր ընել, որովհետեւ առանց աշխատանքի որ եւ է յաջողութիւն ձեռք չի բերուիր: Ծոյլ տղան կրնայ սկսուտութեան մէջ յառաջդիմել, եւ շուտով կը հետաքրքրուի սկսուտական աշխատանքներով: Սկսուտը կորովի ըլլալուն չի յուսահատիր իր կեանքին մէջ յառաջ եկած դժուարութիւններէն եւ կամքի ուժով կը ջանայ յաղթել անոնց. մէկ խօսքով սկսուտը կ'արհամարհէ վհատութիւնը:

ԺԱ. — ՍԿԱՌԻՏԸ ՏՆՏԵՍՈՂ Է: Սկսուտը դիտէ տնտեսել իր ունեցած գոյքերը, ժամանակը, առողջութիւնը, եւ լաւ մատակարարել իր դրամը: Սկսուտը զուր տեղը չի փճացներ առարկայ մը որ կրնայ օրին մէկը օգտակար ըլլալ, անհրաժեշտ չեղած տեղ մը դրամ չի վատներ: Սկսուտը առիթը չի փախցներ իր դրամները տնտեսելու որպէսզի երբ առիթը ներկայանայ իր ծախքերը իր դրամով իսկ հոգայ եւ ուրիշին բարիք մը ընէ կամ օգնէ: Սկսուտը ուրիշին սեփականութիւնը կը յարգէ եւ անոր վնաս չի պատճառեր: Ամէն սկսուտական խումբ ունի իր խնայողական սնտուկը, որ միշտ օգ-

տակար հանդիսացած է սկսուտական արշաւներու եւ բանակումներու ընթացքին: Ատիկէ զատ, իւրաքանչիւր սկսուտ պարտի ունենալ իր խնայողական սնտուկը:

ԺԲ. — ՍԿԱՌԻՏԸ ՄԱՔՈՒՐ Է ՄՏԱՎՈՒՄՈՎ, ԽՕՍՔՈՎ ԵՒ ԳՈՐԾՈՎ: Սկսուտին միտքը երբեք զէջ խորհուրդներու ծնունդ չիտար: Սկսուտին լեզուն ալ իր հոգիին պէս մաքուր է. ան խօսելու ժամանակ աղտոտ խօսքեր եւ հայհոյանք չի գործածեր:

Սկսուտը ոչ մէկ աղտոտ գործ չի կատարեր, ստախօսութիւն, զրպարտութիւն, բանասարկութիւն, եւն, եւ այս տեսակ տղեղ արարքներէ իսպառ հեռու կը մնայ: Սկսուտը դիտէ նաեւ իր մարմինը մաքուր պահել, մաքրութիւնը անհրաժեշտ է առողջութեան համար, ամէն հիւանդութիւն աղտոտութենէ յառաջ կուգայ: Դաւանանքի այս հատուածը թէեւ ամենէն վերջը դըրուած է, բայց շատ կարեւոր է. անիկա ամբողջ դաւանանքը իր մէջ կը պարունակէ:

ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻՆ ՆՇԱՆԱԲԱՆԸ. — Եթէ հայ սկսուտին դաւանանքը առնենք եւ կարծ խօսքի մը մէջ ամփոփենք, չենք կրնար աւելի լաւ եւ աւելի կտրուկ կերպով բացատրել զայն քան հայ սկսուտի նշանաբանովը որն է՝

ԲԱՐՁՐԱՅԻՐ - ԲԱՐՁՐԱՅՈՒՐ

Այս երկու բառերուն մէջ խտացուած է այն ամբողջ պարտականութիւնը որ վերապահուած է հայ սկսուտին: Սկսուտը նախ պիտի բարձրացնէ իր անձը, պիտի հրահանգէ զայն, պիտի կրթէ ու ինքզինքը պիտի հասցնէ այնպիսի փիճակի մը որ կարենայ օգնել ուրիշներուն, բարիք գործել անոնց, ազնուացնել զանոնք եւ այդպէսով ամէն կերպով բարձրացնել:

ՍԿԱՌԻՏԻՆ ԿԱՐԳԱԽՕՍԸ. — Սկսուտ մը միշտ եւ ամէն վայրկեան պատրաստ պէտք է ըլլայ որ եւ իցէ օգտակար եւ շինիչ գործի մը համար. «սկսուտ» կը նշանակէ նաեւ փոխադարձ պատրաստատակամութիւն եւ անձնուիրութիւն: Այդպէս աշխարհիս բոլոր սկսուտները իրենց նշանաբաններէն զատ ընդունած են կարգախօս մը՝ որն է Միշտ պատրաստ:

ՀԱՅ ՍԿԱՌԻՏԸ ԿԸ ՍԻՐԷ ԻՐ ԱԶԳԸ

ԵՒ ԿԸ ՍԵՐՏԷ ԱՆՈՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ստորև, քաղուածարար կուտանք կարեւոր հատուած մը հմտալի նախարանէն, զոր Պ. Յ. Թիւրապեան զբաժնէ Պ. Ա. Աթանասեանի զբքին համար, Témoignages sur l'Origine des Arméniens:

Մեր ընթերցողները ամէն մէկ թիւի մէջ պիտի գտնեն Հայոց պատմութեան մեծ գրուագներուն վերաբերեալ Փրանսիայի սերէն զբուծիչներ:

Հայրէ՛ր, կարգացուցէք զանոնք ձեր զաւակներուն:

Մայրէ՛ր, պահանջեցէք ձեր զաւակնե՛րէն որ կարդալէ յետոյ՝ բացատրեն ձեզի՛ հոգ չէ թէ իրենց թոթով հայերէնով:

Այդ կերպով միայն պիտի օժանդակէք մեզ որ ձեր զաւակներուն մէջ արթնցընենք Հայ ծնած ըլլալու ազնիւ հպարտութիւնը:

Այդ կերպով միայն, ձեր զաւակները պիտի սորվին սիրել ազգը որմէ սերած են եւ որուն անցեալը իրենց մէջ պիտի հրահրէ Հայութեան եւ Հայրենիքի ապագային ծառայելու խանդն ու սէրը:



L'un des professeurs de l'Université de Cambridge, A. Hatton, dans son étude archéologique sur l'Anthropologie, parlant de l'origine et du passé des Arméniens, a dit, entre autres :

« Combien les Arméniens auraient raison d'être fiers, s'ils connaissaient la grandeur de leur passé ! Malheureusement, ils ne le connaissent pas. »

Atanassian, dans son présent ouvrage, **Témoignages sur l'origine des Arméniens**, fait des essais louables pour faire connaître ce passé aux Arméniens résidant en France, particulièrement à la nouvelle génération ; le meilleur moyen étant de lui donner une éducation arménienne et l'enseignement du glorieux passé de sa nation.

D'où sont venus les Arméniens ? Et comment se sont-ils installés en Arménie ? Quelle est l'origine du nom « Arménien » et de « l'Arménie » ?

Pendant les bouleversements qui sévirent en Asie, les Arméniens, fixés dans leur patrie nouvellement conquise, demeureraient inébranlables et, par leur courage, devaient conserver jusqu'à nos jours leur nationalité, leur langue, leurs mœurs, alors que peu à peu presque toutes les peuplades qu'ils avaient connues dans leur enfance disparaissaient de la face du monde. Leurs frères, les Phrygiens, ne sont plus aujourd'hui qu'un vague souvenir. Seuls, parmi leurs contemporains, les Hellènes, les Italiotes et les Gaulois ont surmonté les cataclysmes, non sans avoir cependant subi bien des mélanges, abandonné beaucoup de leurs coutumes d'antan ; mais, en dehors des Grecs, ce n'est pas dans les peuples modernes qu'il convient de chercher les parentés des Arméniens, c'est dans ces nations qui furent apportées des steppes du Nord vers les plages méditerranéennes par cette même marée qui poussa les ancêtres de Haïk vers la Thrace. Or, ces peuples, pour la plupart, sont malheureusement entrés depuis des siècles et des siècles dans les ténèbres de l'oubli.

Tels sont, dans leurs grandes lignes, les débuts de la nation arménienne. Si notre documentation permet de retrouver de façon satisfaisante les principales phases de l'évolution de ce vieux peuple, elle ne nous autorise pas à entrer dans les détails. Toutefois, il n'en demeure pas moins certain que les titres de noblesse de la race remontent à plus de trois mille ans avant nous et qu'ils sont de beaucoup plus anciens que ceux de la plupart des peuples européens. L'Inde et la Chine, en dépit de leurs légendes fantaisistes, offrent à peine des origines aussi reculées. Seuls, les débris des vieilles nations de l'Asie Antérieure, Syriens, Chaldéens, Kurdes (Mèdes) et de l'Afrique du Nord, les

Egyptiens, possèdent de plus antiques souvenirs de leur aïeux ; quant aux Perses, ils n'ont commencé leur vie politique que vers les temps où l'Arménie se constituait elle-même en Etat. C'est aussi vers le moment où la tribu de Haïk quittait la Cappadoce que Rome se fonda. (L'Histoire du Peuple Arménien, pp. 49-50).

Atanassian, en quelques lignes brèves, démontre les services rendus par les Arméniens à l'Europe. A cette occasion, il convient de parler d'un grand événement historique qui a soulevé l'enthousiasme de beaucoup de savants américains et anglais.

En effet, quel est l'Arménien qui ne sentirait son cœur rempli d'orgueil en lisant **L'Histoire de la presqu'île balkanique**, du professeur Schevel, de l'Université de Chicago, et dans laquelle il déclare que la sauvegarde de l'Europe de la domination islamique est autant l'œuvre de Léon Haïgazn et de ses généraux que celle de Charles Martel et de ses Francs. L'illustre professeur, après avoir décrit la situation désespérée de Byzance, réduite à un état chaotique, période qui dans l'Histoire est connue sous le nom d'«Anarchie de vingt ans», ajoute :

« Une pareille époque semblait être aux Arabes une occasion fournie par Allah lui-même pour écraser une fois pour toutes le seul grand Etat pouvant faire obstacle à leur domination universelle. En 717, les Arabes décidèrent donc de faire une incursion sur Constantinople avec des plans de très grande envergure, de beaucoup supérieurs à toutes les attaques entreprises jusque-là. Ce fut dans ce moment d'angoissante menace que parut l'homme qu'il fallait et ce sauveur fut un admirable militaire : Léon. Les Arabes, après avoir, une année durant, assiégé Constantinople par terre, par mer, tant par l'Europe que par l'Asie, exterminés par le froid, la famine et les épidémies, désespérés par la résistance héroïque des soldats de Léon l'Arménien, monté sur le trône impérial la même année, durent battre en retraite avec les restes pitoyables de leur flotte et de leur armée; et grâce à cette résistance héroïque de Léon, non seulement Constantinople fut sauvée de la domination is-

lamique, mais encore toute l'Europe occidentale.

Le professeur Schevel fait ressortir la valeur historique de cet acte courageux de Léon dans les lignes suivantes :

« Il est évident que Constantinople ait salué joyeusement cette délivrance et que l'Europe entière, aujourd'hui encore, se réjouisse au souvenir de l'insuccès de ce siège ; parce que si les forces islamiques parvenaient à écraser l'obstacle grec et avaient pu s'avancer jusqu'au Danube, ils auraient probablement pris tout l'Occident sous leur joug ; cette probabilité devient presque certitude si, élargissant notre vue, nous jettons un regard sur tout le monde méditerranéen. Mais nous voyons alors qu'en ce temps, plus précisément en 711, les Arabes ayant franchi l'Afrique arrivent au sud-ouest de l'Europe en traversant le célèbre cap qui depuis a pris le nom d'un de leurs chefs et qui est connu sous le nom de Gibraltar (Djébal et Tarik, colline de Tarik) ; à la suite de cette invasion, ils conquièrent l'Espagne et la dominent ; ils auraient sans doute poussé leur invasion jusque sur les bords du Rhin et de là joint leur armée à celle venant du Danube ; l'Europe n'avait jamais vu se dresser devant elle un si grand danger venant de ses ennemis d'Asie ; mais, en 717, la défense héroïque de Léon, sauvant la capitale, a brisé l'élan de l'armée arabe, dont l'autre partie occidentale s'avancait jusque vers Poitiers et subissait une sanglante défaite infligée par Charles Martel et ses Francs (732). — Les Arabes durent se retirer jusque dans les Pyrénées ; la victoire de Poitiers est due au courage d'un des nouveaux Etats germaniques fondé sur les ruines de l'Empire romain ; mais cette victoire leur a été assurée en partie par la défaite qu'avait eu à subir l'armée arabe en Orient se battant contre l'empereur Léon. »

Il est des batailles qui décident de la destinée du monde ; ces deux batailles de Constantinople et de Poitiers liées fortement l'une à l'autre comme deux anneaux ont une signification universelle : « le grand projet de conquête islamique ».

Les Arabes vaincus et chassés de Constanti-

nople ne retrouvèrent jamais plus leur élan primitif.

L'un des professeurs de l'Université d'Oxford, Bussell, dans son livre intitulé **L'Empire Romain**, parle comme suit de l'influence catégorique des Arméniens sur la vie de l'Empire byzantin :

« Depuis Justinien (540 av. J.-C.), les meilleurs soldats de l'armée romaine sont les Arméniens ; c'est dans la race arménienne que sont choisis les prétendants de l'Empire byzantin ; dans Rome ou plus exactement dans l'Empire de Byzance, les croyances, les us et coutumes des Arméniens jouissent de la plus grande faveur ; ce sont les militaires arméniens qui enseignent l'art de se battre et de se défendre ; c'est encore l'élément militaire artons et autres races qui auparavant composaient le centre des armées impériales ; c'est des Arméniens que l'esprit combatif et militaire est rentré à nouveau dans la maison de Baisle ; enfin, c'était aux Arméniens de l'Orient, entrés dans l'armée et les familles de Byzance, que fut confié le rôle de défenseur de l'Empire romain, rôle auquel auparavant prétendaient les Teutons en Occident. » Le professeur Bussell continue :

« Au moment de l'invasion arabe, en 705 et 706, sont arrivés d'Arménie un grand nombre de soldats et généraux pour se joindre aux armées romaines ; les forces supérieures de l'armée romaine étaient dirigées par les généraux arméniens qui, en 717, élirent comme empereur un grand général de Marache : Léon. C'était une personnalité fort connue et aimée en Arménie, où avant son avènement au trône, l'empereur Justinien l'avait envoyé pour soutenir Sempad Pacradouni dans sa lutte contre les Arabes ; c'était ce vaillant général, stratéliste et brave, qui avec ses soldats se joignit aux armées de Pacradouni. Dans une lutte sanglante devant les fortifications de Vartanaguerde, il broya l'armée arabe et contraignit le tyran chargé de faire la garde sur l'Arménie, par le prince de Damas, à prendre la fuite.

« Le règne de Léon et de son fils Constan-

tin (717-775) fut sans nul doute l'époque la plus décisive de la destinée de Byzance, voire de l'Europe ; ces deux empereurs supérieurs aux autres ont retardé de sept siècles l'entrée triomphale de l'islamisme à Constantinople. Byzance, gardienne devant la porte de l'Europe, n'a jamais aussi fidèlement accompli son devoir qu'au huitième siècle et pour cet éminent service rendu par Léon et son fils, tous deux animés d'un esprit courageux et viril, nous devons remercier Byzance. » (Tome III, pp. 40-43.)

L'illustre historien français J. de Morgan, dans son livre intitulé **Histoire du Peuple Arménien**, décrit comme suit le rôle important joué par les Arméniens dans l'Empire d'Orient :

« Les étrangers étaient extrêmement nombreux à Constantinople, des légions entières en étaient composées et l'on en rencontrait dans les fonctions les plus élevées de l'Empire. Beaucoup de ces hommes parvinrent au trône, mais aucune nation ne fournit autant d'empereurs que le peuple arménien et ce serait négliger l'une des phases les plus glorieuses de l'histoire des fils de Haïk que de passer sous silence les noms de ces princes qui, pendant plus de trois siècles, ont occupé le souverain pouvoir dans l'Empire d'Orient, c'est-à-dire durant le tiers environ de son existence (395-1453).

« La période arménienne de Byzance ne fut certes pas l'une des moins glorieuses pour l'Empire des Césars ; de grands noms surgissent, de grandes actions illustrent ce terrible choc qui alors avait lieu entre la civilisation et la barbarie des Perses et des Arabes. Nées dans les pays exposés plus que tous autres aux coups des ennemis de la chrétienté, ces familles princières arméniennes disposant, avec la pourpre impériale, de moyens puissants, ont, pendant des siècles, poursuivi la lutte contre l'envahisseur, œuvre qui, dans leur patrie, se trouvait malheureusement être souvent entravée par l'insuffisance des ressources matérielles comme par la position des lieux.

« Certainement ces empereurs ne pouvaient se soustraire aux querelles qui troublaient leur capitale et par la force des choses se trouvaient être obligés de sacrifier au caractère de

leurs sujets grecs, d'écouter, dans leur politique intérieure, les conseils de la prudence ; mais ils n'en ont cependant pas, pour cela, perdu de vue le grand rôle de champions de la civilisation qui leur avait été dévolu par le destin. » (Page 280.)


Gustave Schlumberger, l'éminent byzantiniste, membre de l'Académie des Inscriptions et Belles-Lettres, dans sa préface pour **L'Histoire du Peuple Arménien**, écrit :

« Je nourris l'espoir que beaucoup de Français, beaucoup d'alliés liront cet admirable exposé si clair, si intelligemment présenté de

l'histoire d'Arménie, cette histoire de vaillance, d'énergie et de souffrance, durant des siècles, à l'ombre des deux Ararat, les géants de cette contrée. Pour moi, j'estime que de toutes les diverses périodes où les annales de ce peuple furent constamment belles et tragiques, il n'en est aucune offrant un plus vif intérêt que celle qui concerne la nation arménienne à l'époque des Croisades et l'action si considérable de ses valeureux souverains aux côtés des princes Francs de Terre Sainte pour le plus grand bien des intérêts chrétiens d'outre-mer. »

H. TURABIAN

ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐ, ՍՈՐՎԵՑԷՔ ԶԵՐ ՄԱՅՐԵՆԻ
ԼԵԶՈՒՆ ՈՐ ԶԵՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԻՐ ԲՆԱԳՐԻՆ ՄԷՋ
ԿԱՐԳԱՔ :



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶԱՐԱՆԸ — Գլխավոր մուտք

ՀԱՅ ՍԿԱՌԻՏԸ ԿԸ ՍԻՐԷ ՈՒ ԿԸ ՅԱՐԳԷ

ԻՐ ԱԶԳԻՆ ՄԵԾ ԶԱՒԱԿՆԵՐԸ

ԱԻՏՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

Ամբողջ հայ ժողովուրդը՝ Հայաստան - նէն մինչև հեռաւոր զաղութները՝ տօնեց հայ ժողովրդական մեծ բանաստեղծին, Աւետիք Իսահակեանի յորելեանը:

Աւետիք Իսահակեան ծնած է Շիրակի նահանգին մէջ 1875 հոկտ. 31ին:

Նախնական կրթութիւնը առնելէ վերջ Ալեքսանդրապոլի ազգային վարժարանին մէջ, կը մտնէ Գեորգեան ձեմարանը:

Յետոյ, կ'անցնի իր ուսումը լրացնելու, Գերմանիա, ուր Պերլինի եւ Լայփցիլի մէջ կը հետեւի զրականութեան եւ փիլիսոփայութեան:

Զանազան թերթերու աշխատակցելով մէկտեղ, 1898ին լոյս կ'ընծայէ իր քերթուածներու առաջին հաւաքածոն, — ԵՐԳԵՐ ՈՒ ՎԷՐԳԵՐ, որոնցմէ մաս մը յետոյ կը հրատարակուին առանձին հատորով՝ ԱՇՈՒՂԻ ԵՐԳԵՐ խորագրով:

1909ին էր որ Օսմանեան Մահմանա - գրութեան շրջանին, լոյս ընծայեց ԱՖՈՒ ԼԱՒԱ ՄԱՀԱՐԻ փիլիսոփայական խորքով քերթուածը, որ թարգմանուած է օտար լեզուներու:

ՍԱՍՄԱՅ ՄՀԵՐ երկարաշունչ երկէն դատ, զանազան զրական թերթերու մէջ տպուած՝ ունի բազմաթիւ կտորներ:

Ա. Իսահակեանի քերթուածներէն շատեր, սիրոյ եւ հայրենաբաղձ կարօտի ջերմութեամբ թրթռուն, այսօր երգի վերածուած են:

Ա. Իսահակեան միայն զգայուն բանաստեղծ մը չէ: Այլ նաեւ ուսումնասէն շատ մը, որ խորապէս կը հետաքրքրուի մշակոյթի բոլոր ճիւղերով:

Երկար տարիներ ապրած է զաղութներու մէջ: Բայց երբ Հայաստանի կառավարութիւնը կոչ ուղեց հայ գիրի մշակներուն վերադառնալու Հայրենիք եւ իրենց կարողութիւնն ի սպաս դնելու երկրին վերելքի ճիւղերուն, Իսահակեան

չվարանեցաւ: Վերադարձաւ Երեւան, ուր մեծ ծառայութիւն կը մատուցանէ հայ զրականութեան:

Երեւանի մէջ՝ ի պատիւ իրեն՝ զպրօցականներու կողմէ սարքուած հաւաքոյթի մը ընթացքին, վարպետը խօսք առնելով ըսած է.

— Իմ կեանքի վերջին տարիներն են եւ ես ահա ձեզ ասում եմ, — սիրեցէք մարդուն, ձեզ նմանին, աշխարհը, բնութիւնը, հայրենիքը:

Ես սիրում եմ իմ ժողովուրդին, իմ Հայաստանը, նրա հողն ու ջուրը, դա է ինձ ապրեցնում:

Ես եւրոպայից վերադարձայ, որովհետեւ չէի կարող ապրել առանց հայրենիքի: Հայրենիքն ինձ համար մի տեսակ օրգան է, ինչպէս եւջը կամ սիրտը:

Ես այնքա պացել եմ Շիրակում, ինչպէ՞ս կարող էի ապրել Եւրոպայում ու չտեսնել Լոռին, Հայոց լեռներն ու երկիրը:

Իմ հասակակից ընկերներից շատերը չտեսան այն, ինչ որ ես տեսայ: Ես այսօր տեսնում եմ իմ հայ ժողովուրդին այս - տեղ, ինչպէս դարերով երազել ենք մենք: Ես այսօր տեսնում եմ ձեզ, դուք այն սերունդն էք, որի մասին երազել են իմ նախորդները եւ ես: Ու ես ձեր մէջ, ձեզանով, իմ հայրենիքով բախտաւոր: Քսան տարի առաջ, ես մի շիրմաքարի վրայ կարդացել եմ. — « Այնքան եմ սիրում աստղերը, որ չեմ վախեցնայ գերեզմանի խաւարից »: Ես այդ խօսքով էլ ուզում եմ վերջացնել: Ես չեմ վախեցնում մի - հից: Շիրմա Հայաստանում կը լինի, Ալագեագին, իմ Շիրակի մօտիկ, ես իմ հայրենիքի հողում կը լինեմ: Հայրենիքը ամենահ է, ուրեմն, ես էլ նրա հետ... »:

Սիւնեաց բարձր լեռներում այդ շանքե՛րն են բոցկլտում ;
Հանդ ու ձորեր բլեղում են որոտալից շաշխւնով ,
Դաւիթ-Բէկի ֆաջերի վառ բրերն են կայծակում ,
Ամէն մի սիրտ բնդում է նժոյգների դոփիւնով :

Մեր դարաւոր ցառումի , մեր վըրէժի օրն արդար ,
Դաւիթ-Բէկը մեզ բերեց ազատութեան պատգամով .
Մեր գետերը փրփրաբաշ , մեր դէստերը ծաղկավառ
Կարմրեցին , ցնծացին մեր թշնամու արիւնով :

Դաւիթ-Բէկի ֆաջերի հուրն ու թուրը հըրեղէն
Կտտորեցին , չարդեցին մեր թշնամուն չարաղէտ .
Դըրօշները թող ծփան , ժանգերը թող դողանջեմ ,

Թող ֆուն մտնեն աներկիւղ մեր մանուկներն այսուհետ :
Դաւիթ-Բէկը ծունր իջաւ , երբոր եկաւ Հայաստան ,
Ու կատարեց ուխտը սուրբ . . . Հագար , հաժար փառք նրան :
Թող անձնուրաց ուխտ կապեն մեր թռուները ֆաջածին ,
Դաւիթ-Բէկի թուրը վեհ չըժանգոտի յաւիտեան :
Շողայ , շաչէ , երբ խուժէ մեր սուրբ հողը թշնամին ,
Որ ծուխն անուշ բարձրանկայ մեր տներից յաւիտեան ,

Ա.Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ

Գրուած «Դաւիթ Բէկ» կինոֆիլմի համար :



ՀԱԼԷՊ — Պատէրպօլի իգական խումբը

ՀԵՏՔԵՐ ԵՒ ՆՇԱՆՆԵՐ

Մարդուած սկառուտի մը համար աշխարհի մէջ չկայ աւելի հմայիչ բան մը քան հետքերու հետեւիլը: Իր սրատես եւ մարդուած աչքը կը տեսնէ ամենուրեք, խոտի վրայ, փոշիի կամ ցեխի մէջ հետքեր որոնք իրեն համար գիրերու արժէքը ունին: Այդ գիրերը քովէ քով շարուելով բառեր կը ձևացնեն, բառերը իրենց կարգին կը կազմեն նախադասութիւններ, որոնք իրեն կը պատմեն երկար եւ հետաքրքրաշարժ պատմութիւն մը: Հնարամիտ սկառուտը անմիջապէս կը հասկնայ թէ ինչ տեսակ արարածի մը ոտքը ձգած է այդ հետքերը եւ կամ թէ այդ հետքերուն տէրը վախով, յոյսով, թէ զուարթութեամբ անցած է այդ տեղէն:

Ամէն օր սկառուտը այս կերպով կը կարգայ իր լրագիրը: Լրագիր մը որ կը գրուի ամէն տեղ, տպագրուած աշխարհի ամէն կողմը, երկրի ամէն մէկ ծալքերուն վրայ անվերջ շարքով մը: Սկառուտը գիտէ թէ ինչպէս որ ոչ մէկ յարդի շիւղ կը շարժի առանց հովի կամ առանց ուրիշ ազդակի մը միջամտութեան, այնպէս ալ ոչ մէկ արարած կրնայ զետնի վրայ շարժիլ առանց հետք մը թողնելու:

Սկառուտը փնտռելով այս նշանները կը մարդէ իր տեսողութիւնը, կը զօրացնէ իր դիտելու կարողութիւնը այնպէս որ ան կը գիտէ աւելի հեռուն եւ աւելի շուտ քան շատ մը ուրիշ ոչ սկառուտ անձեր: Եւ նոյն իսկ կը տեսնէ շատ մը բաներ որոնք ուրիշներու աչքին անտեսանելի պիտի ըլլային:

Իր ահանջները այնքան վարժ են որ կը լսէ եւ կը նշմարէ տերեւի մը իյնալը, կամ հեռուոր ճիւղի մը ճարձատիւնը: Գիտէ թէ տերեւ մը կրնայ իյնալ ինքնարեքարար բայց ոչ մէկ ճիւղ կը ճարձատի առանց ճնշումի, եթէ ծայր աստիճան փոսած եւ որթնոտած չէ:

Իր հոտառութիւնը այնքան մարդուած է որ ամէն զեփիւռ պատգամ մը կը բերէ իր քթին: Լաւ մարդուած սկառուտներէն ոմանց քով չօշափելու կարողութիւնը այն

քան զօրացած է որ եթէ մութ գիշերուան մէջ անցնիլ ճախճախուտ ճամբէ մը կամ անտառի մը ցեխոտ ուղիէն, կրնան վերադարձին անսխալ իրենց ոտքի հետքերու հետեւիլ մատնեով կամ ոտքերով չօշափելով գետինը:

Սկառուտին աչքը սովորած է նշմարելու լոյսի մը անմիջական եւ ամենափոքրիկ նշոյլ մը: Զոր օրինակ դանակի շեղփի մը կամ հրացանի փողի մը վրայ ցոլացող լոյսի մը արագ բացփութումը կը ծանուցանեն թէ մէկը կայ մօտերը:

Սկառուտին աչքերը ամէն կողմ կը սլուտին եւ բնաւ դադար չունին: Ինչ որ կը տեսնէ կը տպաւորուի իր յիշողութեան մէջ եւ ուր որ երթայ շուրջը գիտելով միտքը կը պահէ յայտնի նշաններ որոնց միջոցաւ կրնայ դիւրութեամբ վերադառնալ իր գացած ճամբէն: Տեղ մը գացած ատեն յաճախ ետին կը դառնայ դիտելու համար թէ զանազան կէտերէ ինչ գիրքով կ'երեւի իր եկած ճամբան: Խաչածու ճամբաներ եթէ հանդիպի իր մասնաւոր նշանները կը դնէ քարերով, ճիւղերով կամ թէ ծառերու վրայ, որպէսզի վերադարձին իր ճամբան չկորսնցնէ: Եթէ ձիու վրայ է կը դիտէ իւր ձիուն ահանջները, որովհետեւ անոնք իրեն համար անլսելի եղած շշուկները կ'իմանան եւ պէտք է խիստ զգոյշ ըլլալ եթէ ձիուն ահանջները յանկարծ կը կծկուին:

Երբ գիշեր ատեն ձի հեծած է, յաճախ վար կ'իջնէ եւ ահանջը գետնին փակցնելով մտիկ կ'ընէ: Այսպիսով կրնայ իմանալ մօտակայ քայլեր, կամ կառքի անխնեւութեամբ, կամ կենդանիի ոտնաձայնը:

Կատարեալ սկառուտ մը կրնայ քնանալ ունէ ժամանակ եւ արթննալ փափաքած ունէ վայրկեանին: Ասիկա վարժութեան խնդիր է պարզապէս: Բացօդեայ կրակները միշտ պերճախօս են սկառուտին համար: Պլպլացող բոցեր որոնք կը կորսուին ու մէջտեղ կ'ելլեն փոխն ի փոխն, կը տեղեկացնեն թէ մարդիկ կան կրակի շուրջ:

Դեռ չմարած կրակներ կամ տաք մոխիրներ կը յայտնեն թէ որքա՞ն ատենէ ի վեր լքուած է այդ բանակավայրը: Ուտելիքի մնացորդներ, կամ ձգուած տուփեր կամ թուղթեր ցոյց կուտան թէ քանի հոգի բանակած են հոն, եւ կը ծանուցանեն թէ ի՞նչ կերպով մեկնած են անոնք, աճապարանքով թէ հանդարտօրէն:

Սկաուտ մը որ ծածուկ կերպով կը հետեւի, անձի մը կամ կենդանիի մը, կրնայ յանկարծ հակառակ իր բոլոր զգուշու – թիւններուն դէմ առ դէմ գտնուիլ անոր հետ: Եւ սակայն կրնայ ըլլալ որ այդ անձը կամ կենդանին դեռ չեն նշմարած զինքը: Այդ կէտը մեծ առաւելութիւն մըն է սկաուտին համար որ կրնայ քարացած կենայ եղած տեղը եւ թերեւս ստիպուի կէս ժամ այդ դիրքին մէջ մնալ առանց ամենափոքր շարժում մը ընելու: Մարդիկ չեն կրնար հետուէն իրարու հոտ առնել, ինչպէս որ կ'ընեն վայրի կենդանիները: Նոյն խի վայրի կենդանի մը կրնայ չնկատել մէկը որ շատ մօտերը կը գտնուի, որքան ատեն որ նա անշարժ կը կենայ եւ հովը դէպի իրեն չի բերեր անոր հոտը: Սակայն մէկ ոտքի վրայ կեցած միջոցին ոտքը վոթիւր կրնայ ազիտաբեր ըլլալ, եթէ ճիւղ մը ճարճատի կամ հոգի կտոր մը շարժի:

Սկաուտը ոչ միայն նշաններ պէտք է փնտտէ այլ եթէ արահետի մը վրայէն կը

յառաջանայ պէտք է լաւ դատէ թէ ո՞րն է հետեւելի ամենայարմար ուղին եւ թէ ճամբու ո՞ր մասերը աւելի ընդունակ են հետքեր կամ նշաններ կրելու:

Սկաուտ մը կարող է ծառի մը վրայ մազլցիլ լաւ դիտելու համար շրջակայքը: Իրեն սրտասէլիք հաւանական վտանգի մը առջեւ սրտարիւնութեամբ կը խորհի թէ ինչպէ՞ս պէտք է զործել: Մտովն շուրջ գտնուած հոգին վրայ ունէ ոտքի հետք չի թողուր եւ երբ ծառի մը վրայ ելած է, կարելի եղածին չափ ծառի բունին մօտ կը կենայ որպէսզի նշմարուելու հաւանականութիւնը կարելի եղածին չափ նուազեցնէ: Կրնայ նաեւ ճիւղի մը երկայնքին սրտակիլ: Անտառներու եւ դաշտերու մէջ առուակներու ափունքին, մէկ խօսքով ամէն կողմ սկաուտ մը միշտ կրնայ գտնել հետքեր քննելու համար: Ծարունակարար հետաքրքրութիւնը արթուն պահելով, եւ ջանալով կարգալ բնութեան լրատու նշաններու իմաստը, սկաուտի դիտելու վարժութիւնը մեծապէս կը զարգանայ ամենափոքր դէպքերէն, ճայներէն եւ շարժումներէն հետեւութիւններ հանելու կարողութիւնը կը մարդուի եւ այդպիսով կը դիւրանայ բնութեան օրապիբքին ծածկազարութեան բանալին:

ԾԵՐ ԳԱՅԼ



ՀԱԼԷՊ.— Սկաուտական խումբերու տողանցքը միջմասնահիւղային ֆուրպօլի կիսնդիպումներու ընթացքին:

ԱՌՈՂՋԱՊԱԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ



ՄԱՐԺԱԿՐԹԱՆՔԸ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱԿՆՈՑՈՎ

Գիտութեան աստիճանական զարգացումը եւ ի մասնաւորի, կենսաբանութեան ու բնախօսութեան կալուածներուն մէջ ձեռք բերած հիմնական նուաճումները եկած են այսօր հաստատելու թէ մարմնակրթանքը պարզապէս մարմինի բարեձեւութեան, կամ ոճի եւ ձեւի խնդիր մը չէ այլեւս, այլ իր մէջ կը պարփակէ կենսաբանական ընդհանուր երեւոյթներու ամբողջութիւն մը՝ որ մարդանքի կատարումով ի յայտ կուգայ մարդու գործարանային կազմութեան բազմապիսի սպասարկութեանց ընթացքին:

Մեկնելով այս տեսակէտէն եւ մարմնակրթանքի մասնագէտներուն թողնելով մրկանային շարժումներու ձեւերուն ու մեթոտներուն ուսուցումը, անհրաժեշտ է ցոյց տալ ու բացատրել այդ շարժումներու յառաջ բերած ազդեցութիւնները մարդկային գործարաններու վրայ եւ որոշել այն սահմանները՝ որոնց մէջ կարելի է զանոնք գործադրել, միշտ նկատի ունենալով իւրաքանչիւր մարդիկի սեռը, տարիքը, կազմաւորումը եւ մարմնի ներդաշնակ զարգացման աստիճանը:

Մարմնակրթանքի ուսուցչին առընթեր, բժիշկը պէտք է ըլլայ առաջնորդն ու խորհրդատուն՝ մատնանշելու համար, ըստ սրարագային, շարժումներու չափազանցումներն ու սխալները, որոնց անտեսումը կրնայ խիստ անբաղձալի հետե-

ւանքներու ծնունդ տալ: Այլ խօսքով, մարմնակրթանքը պէտք է ենթարկուի բնախօսութեան հակադէպին, որպէսզի համեմատական մնալով իւրաքանչիւրի ուժին եւ ընդունակութեան՝ կատարուի չափաւորեալ եղանակով մը, չսարսափեցնէ ենթական եւ յառաջ բերէ՝ համաչափօրէն զարգացած մարմնի մը մէջ, կատարեալ առողջութիւն մը:

Մարմնակրթանքի ուսուցման ու կիրառման մեթոտները բազմաթիւ են: Կան նոյնիսկ ուսուցման որոշ դպրոցներ, որոնք համաշխարհային համբաւ ունին: Բայց բնախօսներու եւ կենսաբաններու կարծիքով այդ բոլոր դպրոցները եւ անոնց որդեգրած զանազան մեթոտները գրեթէ միեւնոյն բարերար ազդեցութիւնը կ'ունենան՝ երբ հաւատարիմ մնան բնախօսութեան պարտադրած տարրական սկզբունքներուն եւ ձգտին կանոնաւորելու իւրաքանչիւր մարդիկի սննդական փոխանցումի եւ զիմադրական ուժի փոխ-յարարելութիւնները: Անոնք բոլորն ալ կը բնանան, ընդհակառակն, չարիք մը ըլլալ եւ շատ լուրջ արկածներու տեղի տալ, երբ անխտիր պարտադրուին ամէնուն, առանց նկատի առնելու ամէն մէկուն Ֆիզիքական եւ բնախօսական առանձնայատուկ պայմանները:

Արդարեւ մարդու մը կատարել կըրցած միանային շարժումները այնքան ալ բազ-

մաթիւ չեն: Չանոնք կարելի է դասել վեց խումբի:

1. Ծեքում կամ կորում (Flexion)
2. Զդտում կամ ձգում (Extension)
3. Աորերում (Adduction)
4. Զատուցողութիւն (Abduction)
5. Շրջում կամ թաւալում (Rotation)
6. Շրջածութիւն (Circumduction)

Բայց անհրաժեշտ է զիտնալ զանոնք օգտագործելու եւ ներդաշնակելու կերպերը, որոշել ա՛յն կարգը՝ որով անոնք իրարու պէտք է յաջորդեն եւ մանաւանդ ճշդել անոնց չափն ու սահմանը ըստ տարիքի, սեռի եւ ֆիզիքական կազմաւորման: Ուրիշ խօսքով մարմնակրթանքը կշտադատութեան խնդիր մըն է: Ուսուցչին կը մնայ, ըմբռնել թէ ե՞րբ եւ ո՞ր սահմանէն ասդին կամ անդին՝ մարզանքը անօգուտ է այլեւս եւ մանաւանդ վնասակար՝ երբ շարունակուի:

Մարմնակրթանքի խղճամիտ եւ ձեռնհաս ուսուցիչը հիմնուած իր փորձառութեան եւ կազմախօսութեան մասին իր ունեցած ծանօթութիւններուն վրայ, պէտք է աչալուրջ հսկէ եւ անմիջապէս տեսնէ ա՛յն ազդանշանները, որոնք յոգնութիւն կը մատնանշեն: Ծնչառութեան եւ արեան շրջանառութեան բնականոն ու չափաւոր արագութեան վրայ մարզանքի ունեցած բարեբար ու օգտաշատ խթանումին եւ միկանային տարապայման յոգնութեան արդիւնք եղող սրտի ընդլայնումի եւ թուլացումի պէս խիստ վնասակար հետեւանքներուն միջեւ՝ կան միջանկեալ հանդրուաններ՝ զորս ուշգրութեամբ կանխատեսել պէտք է:

Այս գիտութիւնը շատ փափուկ է: Մէկ օրէն միւս կարելի չէ անոր տիրապետել: Ժամանակ, ձեռնհասութիւն եւ գիտելու բնդունակութիւն պէտք է ունենալ, որեւէ մարզանքի տուեալ անհատին մէջ յառաջ բերած բնախօսական ազդեցութիւններու ճշգրիտ հաշուեկշիռը պատրաստելու համար:

Մարդկային բնախօսութիւնը՝ որ կենսարանական գիտութիւններու համակեղբոնացումն է, անհրաժեշտ ու պարտա-

զրիչ կը դառնայ ուրեմն բոլոր անոնց համար, որոնք պարկեշտօրէն մարմնակրթութեանը ուսուցանելու պաշտօնը կը ստանան: Որովհետեւ մարզանքը իրրեւ կարեւորագոյնը ընդհանուր առողջապահութեան միւս ազդակներուն՝ պէտք է որ ենթարկուի գիտութեան հակակշիռին, ինչպէս միւսն էր: Ընդդէմ ա՛յս կէտին մէջն է արդիական մարմնակրթանքի դերակաշուծութիւնը հինին վրայ, եւ ո՛չ թէ թէքնիքի կատարելագործութեանը: Շատ հաւանարար հին Հելլագայի եւ Ողիմպոսի մարդիկները նոյնքան ճարտար ու ճապուկ էին, եթէ ո՛չ աւելի, որքան այսօրուանները: Մեր դերակաշուծիւնը անո՛ր մէջն է, որ շնորհիւ բնախօսութեան նըւաճումներուն, ի վիճակի ենք հասկնալու եւ չափելու մարզանքի հակազդեցութիւնը մարդկային զործարաններու վրայ: Անարդարանալի պիտի բլլայինք եթէ անտեսէինք այս առաւելութիւնը, որ մեզի թոյլ կուտայ մարդիկ նոր սերունդը գիտութեան լոյսին տակ, փտանդէ զերծ եւ առողջապահական պայմաններու ապահովութեանը տակ:



Ներածական այս ընդհանուր տեղեկութիւններէն յետոյ, յաջորդ յօդուածներովս պիտի ջանամ աւելի լայն ու մասնագիտական ծանօթութիւններ տալ հետեւեալ նիւթերու շուրջ:

- 1.— Ծնչառութիւնը,
- 2.— Արեան շրջանառութիւնը,
- 3.— Զղային դրութիւնը:

Այս երեք կէտերը՝ մարզանքի կապակցութեամբ:

- 4.— Մանդառութիւնը հանդստի եւ մարզանքի պահերուն:
- 5.— Մարմնի կազմաւորման զարգացումը մարզանքի եւ սննդառութեան կապակցութեամբ:
- 6.— Կանանց մարմնակրթանքը:
- 7.— Մարզանքը՝ իրրեւ բուժական միջոց (մարզաբուժութիւն):

ՏԻԹ. Հ. ԳԱԼՃԵԱՆ

Փարիզ

ԴԱՍԸՆԹԱՑՔ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԽՆՈՄՔՆԵՐՈՒ

Գ. ԳԼՈՒԽ

ԱՐԻԻՆԱՀՈՍՈՒՄՆԵՐ

Ծանր վերքեր

Օրինակ՝ աշխատանքի արկածներ կամ փողոցի արկածներ:

Այստեղ՝ զործը վիրարոյժին կ'երթայ: Իսկ անմիջական դարձանք կը կայա - նայ՝

Վիրաւորուած մասը չոր կապել (ուժեղ սեղմել եթէ կ'արիւնի):

Վիրաւորը փութով փոխադրել դարձա - նատուն:

Բաղձաթիւ պարազաներու մէջ, կրնայ ըլլալ որ դտնութիւնք արիւնահոսումի առ - ջեւ:

Ընդհանրապէս, չղիտցողները կը շա - փազանցեն արիւնահոսման կարեւորու - թիւնը:

Միակ ծանր պարազան միջին կամ մեծ շնչերակի մը արիւնահոսումն է:

Բայց այդ ալ կը տեսնուի արդէն առա - ջին ակնարկով, արիւնը կը հոսի առատ, ընդհատ, ընդհատ, կաս-կարմիր:

Պէտք է սակայն դիտնալ թէ կարգ մը վէրքեր, բուն բախումի մը իբր հետե - ւանք անմիջապէս չեն արիւններ: Արիւնը աւելի յետոյ կը հոսի: Պէտք է ուրեմն միշտ հսկել վիրաւորներուն վրայ:

Յաճախ, արիւնահոսումը, անմիջապէս ժամը հետեւանք չուցնելով:

Շնչերակային փոքր արիւնահոսումներ. (արիւնը կը հոսի շատ բարակ ընդհատ ժայթքով) կամ երակային արիւնահոսում - ներ (արիւնը կը վազէ առանց ժայթքի):

Ա. — ԻնձՊէՍ ԿԵՑՆԵԼ ՓՈՔԻ ԱՐԻԻՆԱ - ՀՈՍՈՒՄՆԵՐԸ

Այս տեսակ արիւնահոսումները կը կե - նան ճնշիչ վիրակապումով: Պարզ վիրա - կազ մըն է լաւ սեղմուած:

Վէրք մը այս կերպով կապելու համար՝

1 — Վրան կը դնեն քանի մը խաւ չոր շղարչ, քիչ մը զզուած բամպակով ծած - կուած:

2 — Այս բոլորը բռնել կուտաք պաս -



տանէ ժանեակով մը: Այս ժանեակը կը սեղմէք ուժով մը. սակայն, վիրաւորին բաղկերակը քննելով, պէտք է ստուգել թէ արիւնը կը շարունակէ իր շրջանը եւ թէ վիրակապը իսկական պարաւանդի մը (garrot) դերը չի կատարեր:

Այս պարազաներուն մէջ, երբէք չդիմել պարաւանդ զործածելու միջոցին. արիւ - նահոսումը ծանր չէ. շարդարացներ նման միջոցի մը զործածութիւնը որ կրնայ վը - տանգաւոր ըլլալ:

Բ — ԻՆՉՊԷՍ ԿԵՑՆԵԼ ՄԵԾ ԱՐԻԻՆԱ - ՀՈՍՈՒՄՆԵՐԸ

Միջին կամ մեծ շնչերակներու արիւ - նահոսումն է որ կը պահանջէ պարաւանդի կամ դառնակի (tourniquet) զործածու - թիւնը:

Պէտք է արագ զործել, եթէ ոչ քանի



ՃՆՇԻՉ ՎԻՐԱԿԱՊ

կապելի յետոյ բազերակը բնականով նայիլ քէ կապը շատ չէ՞ սեղմած:

մը վայրկեանի մէջ, վիրաւորը կրնայ զրկուիլ իր ամբողջ արիւնէն:

Մինչ մէկը կը պատրաստէ պարաւանդ մը, միւսը պարտաւոր է կեցնել արիւնը,

իր մատներով ուժգին կոխելով արիւնոյ երակին ճնշման կէտին վրայ:

Պէտք է լաւ ճանչնալ ճնշման կէտերը (տեսնել պատկերը):

Զիստին վրայ, ճնշել ճիշդ ասուկին մէջտեղէն:


Բազուկին վրայ, ճնշել դնդերին դէպի ներսօքը, ոսկորին վրայ:

Պարաւանդներ եւ դառնակներ

Աստնք, սրտին եւ շնչերակային արեան ժայթքին միջեւ դրուած կապեր են, բաւական ուժեղ սեղմուած, արիւնը բոլորովին կեցնելու համար:

Ամէն բանէ առաջ, պէտք է շուտ շարժիլ:

Որեւէ կապ դործը կը տեսնէ. բայց ջանացէք քառուչուի կապիչ մը ճարել, եթէ չգտնէք, լայն կերպասէ կապ մը, թաշկինակ, փողկապ, վընոց եւայլն: Հետո՞՞՞յնի թելի պէս բարակ կապերը թէեւ աւելի վտանգաւոր են, բայց, նախընտրելի են



Մեծ շնչերակներու ճնշման կէտեր

քան արագ մահը, որուն կրնայ ենթարկուիլ վիբրաւորը, արիւն կորսնցնելով, քանի որ կարելի է քիչ յետոյ՝ զանոնք փոխարինել աւելի յարմար կապերով:

1 — Կակուղ քառուչու մը մէկ քանի անգամ դարձնել վիբրաւոր անդամին շուրջ, ամէն անգամուն աւելի սեղմելով քառուչուն:

Կապել երկու ծայրերը:

2 — Գտնակ

Կերպասի կտարով մը (թաշկինակ, փողկապ, սրբիչի կամ շապիկի կտոր, եւն.) կտորը կապել վէրքէն վեր՝ անոր շուրջ: Այսպէս կազմուած օղակին մէջ անցընել փայտի կտոր մը: Եւ դարձնել՝ մինչեւ որ արիւնը կենայ:


Կապը բռնել տալ թելով մը կամ ուրիշ որեւէ առարկայով. (տեսնել պատկերը):

ՊԵՏՔ Է ԶԳՈՒՇԱՆԱԼ.

ՊԱՐԱՆԴՆԵՐ ԿՍԱՆԳԱՒՈՐ Է

1 — Պարաւանդը կը կեցնէ արեան շրջանը անդամին մէջ եւ մարմնին այդ մասը կը զրկէ սնունդէ. հետեւանքը ծանր է. կրնայ փտութիւն առաջ դալ:

Սկզբունքով պարաւանդը պէտք չէ 20 վայրկեանէն աւելի տեւէ: 20 վայրկեան



Պարաւանդի եւ դառնակի գործածութեան եղանակը

յետոյ, զայն կը թուլցնեն մեղձօրէն, եւ եթէ արիւնահոսումը չվերսկսի, զայն կը փոխարինեն ճնշիչ վիբրակապով մը:

Եթէ արիւնը դարձեալ հոսի, ստիպուած էք պարաւանդը պահել. բայց պէտք է փորձել դարձեալ՝ քառորդը անգամ մը կապը թուլցնելու:

2 — Պարաւանդով կապուած ամէն վի-
րաւոր արազ դարմանումի կը կարօտի .
որքան կարելի է շուտ , բոլորէն առաջ ,
պէտք է զայն փոխադրել ուր որ կարելի
է վիրարոյժ մը գտնել :

Այստեղ ուրեմն , բժիշկը բերել տալուն
վրայ չէ հարցը , այլ պէտք է ամէն կա-
րելի միջոցներով , (ինքնաշարժ , օդանաւ ,
եւայլն) զայն արագօրէն փոխադրել հի-
ւանդանոց կամ դարմանատուն :

3 — Երբէք պէտք չէ լինի խոյս կարգի
վիրաւոր մը . եթէ ուրիշ արկածեալներ
կրնան ճամբորդել առանց հիւանդապահի ,
այս տեսակ վիրաւորի մը քով պէտք է
միշտ գտնուի բժիշկ մը , կամ վարժ մէկը ,
որպէսզի նախատեսուած ժամերուն , փոր-
ձէ պարաւանդին տեղ ճնշիչ վիրակապ
գործածել :

Փոխադրութենէ առաջ , վիրաւորին
ջուր խմցնելու է , եթէ փորէն ալ չէ վի-
րաւորուած :

ՈՒՐԻՇ ՊԱՐԱԳԱՆՆԵՐ

Գլխու վէրքեր . — Հակառակ իրենց
սպաւորիչ երեւոյթին , գլխու վէրքերը
չառ ծանր չեն ըլլար : Գլուխը սեղմող
կապերով , յաճախ կրնաք բոլորովին կեց-
նել արիւնը , պայմանաւ որ կապը անցնի
ծնօտին տակէն , որպէսզի կոթնելիք տեղ
ունենայ :

ԱճՈՒԿԻ ՎԷՐՔԵՐ . — Չոր ճնշօններով
լեցնել վէրքը եւ վէրքին վրայ ուժեղ կո-
խել , ի հարկին՝ ուրիշներու հետ փոխնի-
փոխ :

ՎԻՉԻ ՎԷՐՔԵՐ . — Չոր ճնշօններ գոր-
ծածել վէրքին վրայ եւ վէրքին վերէն՝
վրդին շնչերակին վրայ կոխել :

(Շարունակելի)

ՍԿԱՌԻՏԸ ՀՆԱԶԱՆԴ Է

ՈՐՊԷՍՁԻ ՍՈՐՎԻ ՆԱԵՒ ՄԵԾԵՐՈՒ ՀԱՆԴԷՊ ՅԱՐ-
ԳԱՆՔԸ՝

ՅԱՆՁՆԵՑԷՔ ԶԵՐ ԶԱԻԱԿՆԵՐԸ Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱ-
ՌԻՏ ԵՈՒՄԲԵՐՈՒՆ :

Պատերազմի օրերուն է : Հայ մը կը
մտնէ մարդական դոյքեր ծախող փարիզ-
եան ծանօթ վաճառատուն մը , գնումներ
ընելու նպատակաւ : Ու դիտնալով որ վա-
ճառականը Հ. Մ. Ը. Մ.ի հայթայթիչը
եղած է , իբր տեսակ մը յանձնարարական ,
կը յայտնէ թէ ինքն ալ հին Հ. Մ. Ը. Մ. -
ական մըն է :

Սանութպանը , դէմքին ժպիտը կորու-
սած , անմիջապէս կը պատասխանէ թէ ո
եւ է սպրանք չունի ծախելու Հ. Մ. Ը. Մ.ի
անդամի մը , որովհետեւ տարիներէ
ի վեր Հ. Մ. Ը. Մ.ը իրեն կը պարտի կա-
րելու դումար մը , եւ հակառակ եկող դա-
ցող վարչութիւններուն ոչ ոք հետաքրք-
րուած է այդ մասին :

Յառախորդը կը հարցնէ թէ ի՞նչ է Հ.
Մ. Ը. Մ.ի պարտքը , եւ անմիջապէս կը
վճարէ զայն , ինչպէս նաեւ իր գնած ա-
ռարկաներուն փոխարժէքը , աւելցնելով :

— Բարեկամ , այդ անհողութիւնը ե-
ղած է պատերազմի պատճառաւ , դիտցիր
որ Հ. Մ. Ը. Մ.ը պատուաւոր միութիւն
մըն է եւ թոյլ չի տար որ իր համբաւը
աղտոտի քանի մը հազար Քրանքի համար :

Այս առատածեռն , այլ համեստ ու հա-
ւատաւոր Հ. Մ. Ը. Մ.ականը ցարդ կը
մնայ անձանօթ :

Ոչ ոք զիտէ թէ ո՞վ է :

Եւ խանութպանը ինք է որ կը պատմէ
միջադէպը , յայտնելով իր սքանչացումը ,
այն միութեան մասին որ կրնայ այդքան
վսեմ դադափարներ ներարկել իր անդամ-
ներուն :



(շարունակութիւն)

Գնդակ. — Ֆուտբոլի զնդակը պէտք է ըլլայ կլոր: Դուրսի պատեանը պէտք է ըլլայ կաշիէ եւ իր շինութեանը մէջ պէտք է մտնէ խաղացողները վիրաւորելու կամ վտանգելու ունէ նախանիւթ:

Գնդակի շրջագիծը պէտք է ըլլայ առաւելին 71 սանդիմէթր, և առնուազն 68 սանդիմէթր: Խաղի սկիզբը զնդակը պէտք է կշռէ առաւելին 453 կրամ եւ առնուազն 396 կրամ:

Խաղացողներու քիւր: — Ֆուտբոլի խաղը պէտք է խաղացուի երկու հակառակորդ խումբերով որոնց իւրաքանչիւրը կը բաղկանայ առաւելին 11 հոգիէ, որոնցմէ մին բերդապահը կ'ըլլայ: Միւս խաղացողներէն մէկը կրնայ խաղի միջոցին բերդապահին տեղը անցնիլ, պայմանաւ որ նախապէս դատաւորին լուր տըրուի: Խաղը սկսելէն առաջ երկու հակառակորդ խումբերու միջեւ տրուած որոշման համաձայն կարելի է խաղի միջոցին վիրաւորուած խաղացողներուն տեղը ուրիշ խաղացողներ զնել, բացի այն պարագայէն երբ խաղը տեղի կունենայ պաշտօնական մրցումի օրէնքներուն համաձայն: (Միջազգային մրցում մը որուն կը մասնակցի անդլիական 4 միութեան խումբերէն մին կը նկատուի պաշտօնական մրցումի օրէնքներուն հպատակող խաղ):

Պատիժ. — Եթէ խաղացող մը խաղի

միջոցին առանց դատաւորին իմաց տալու բերդապահին տեղը անցած է եւ ձեռքով զնդակին կը դպի, հատուցումի մեկերեսին մէջ, հակառակորդ խումբը իրաւունք կը ստանայ հատուցումի հարուած մը տալու:

Այն խաղացողը որ դաշտէն կը հեռանայ (վիրաւորման պարազայէն դատ) առանց դատաւորին հաւանութեանը, կը նկատուի յանցաւոր, անտեղի արարք մը գործած ըլլալու ամբաստանութեամբ:



Խաղացողներու հագուստը. — Խաղացող մը պէտք է ունենայ իր հաղուստի ունէ մէկ մասին մէջ, միւս խաղացողներուն վտանգ սպառնացող ունէ առարկայ: Կօշիկները պէտք է համաձայն ըլլան հետեւեալ օրէնքներուն: Կօշիկներուն տակ դամուած հատուած (barre) կամ կառչակները (crampon) պէտք է ըլլան կաշիէ կամ կակուղ քառւորուէ: Գամբերը պէտք է լաւ մխրճուած ըլլան կաշիին կամ քառւորին մէջ: Հատուածները պէտք է ըլլան տափակ եւ լայնքին դամուած, անոնց լայնքը պէտք է ըլլայ առնուազն 12 միլիմէթր, պէտք է ծածկեն կօշիկին ամբողջ լայնու-

թիւնը եւ երկու ծայրերը կը որոցուած ըլլան: Կառչակները պէտք է ըլլան շրջա- նակաձեւ եւ տափակ, այսինքն ոչ կոնա- ձեւ եւ ոչ ալ սրածայր, եւ առնուազն 12 միլիմէթր տրամագծով: Հատուածներ եւ կառչակներ կարելի է խառն դործածել կօշիկներուն տակը, պայմանաւ որ իւրա- քանչիւրը համապատասխանէ վերոյիշեալ օրէնքներուն: Կօշիկներու տակը դամուած հատուած կամ կառչակները պէտք չէ որ 12 միլիմէթրէ աւելի հաստ ըլլան: Մե- տաղէ՛ պաշտպանութեան վահաններու դործածութիւնը բացարձակապէս արդիւ- ուած է, նոյն իսկ եթէ անոնք ծածկուած ըլլան կաշիով կամ քառւորուով: Խաղացողի մը սովորական հագուստներն են՝ շա- պիկ մը, կարճ տափառ մը, զուլպաներ եւ կօշիկներ: Բերդապահը պէտք է միւս խաղացողներէն տարբեր գոյնով հա- զուստներ կրէ զիւրաւ զանազանուելու համար: Հակառակորդ խումբերու հա- զուստները պէտք է որոշապէս տարբեր գոյներով ըլլան շփոթութեան տեղի չի տալու համար:



որոշումներ ամէն անգամ որ երկուութիւն ստեղծող պարագաներ ներկայանան: Խա- ղի միջոցին պատահած դէպքերու մասին իր տուած որոշումները անդառնալի են, որքան առեն որ այդ որոշումները կը վե- բարերին խաղի արդիւնքին: Իր իրաւա- սութիւնը կը սկսի խաղի սկիզբին տրուած սուրիշի հաբուածէն անմիջապէս վերջ եւ կը շարունակուի խաղի միջոցին պատա- հած մասնակի դադարներուն միջոցին կամ գնդակին դաշտէն դուրս ելլալու միջոցին:

Դատաւորը եթէ նկատէ որ խաղացող մը պատժելով այս կամ այն կողմին առա- ւելութիւն մը տուած կ'ըլլայ, կրնայ զանց առնել պատիժը:



բ) Դատաւորը նկատի պիտի առնէ բոլոր պատահարները, ժամանակը շափանչելու պաշտօնը պիտի ստանձնէ եւ պիտի հսկէ որ խաղը տեւէ օրէնքին պարտադրած եր- կարութեամբ, հաշուի առնելով վիրաւո- բումի կամ ուրիշ ուել պատճառաւ կոր- սուած վայրկեանները:

գ) Դատաւորը բացարձակ իրաւասու- թիւն պիտի ունենայ կեցնել խաղը օրէնքի դէմ գործուած ամէն արարքի համար: Առժամեայ կերպով կամ վերջնականապէս դադարեցնել մրցումը ամէն անգամ որ ան- հրաժեշտ դատէ, օղի պայմաններու, հան- դիսատեսներու միջամտութեան կամ ու- րիշ ուել պատճառի հետանօք: Այդ պարա- վային պէտք է դէպքերուն մանրամասն տեղեկագիրը յղէ իրաւասու կազմակեր- պութեան, մրցումներուն պատասխանա- տու միութեան ներքին կանոնադրին մէջ յիշուած ձեւով եւ պայմանաժամի միջո- ցին:

դ) Դատաւորը դաշտ ոտք կոխած վայր- կեանին իսկ բացարձակ իրաւասութիւն կը ստանայ զզուշացնել ամէն խաղացող որ

Պատիժ. — Այն խաղացողները որոնք սոյն օրէնքներուն հակառակ կերպով հագուած են, դաշտէն կը հեռացուին եւ մինչեւ որ դատաւորը անոնց հագուածքը օրինաւոր եւ զոհացուցիչ չյայտարարէ, եւ իր հաւանութիւնը չտայ, չեն կրնար վերադառնալ դաշտին վրայ եւ մասնակցիլ խաղին: Խաղացողները չեն կրնար խաղին մէջ մտնել որքան առեն որ գնդակը խա- դէն դուրս չէ ելած:

Դատաւորը. — Իւրաքանչիւր մրցումը վարելու համար կ'որոշուի դատաւոր մը:

ա) Դատաւորը պիտի հսկէ խաղի օ- րէնքներուն կիրարկումին եւ պիտի տայ

անհարգապահ կը դռնուի կամ անվայել արարք մը կը գործէ, եւ խաղէն դուրս հանել խաղացող մը, կրկնութեան պարագային: Այդ պարագային դատաւորը պիտի տեղեկացնէ յանցաւոր խաղացողին անունը իրաւասու կազմակերպութեան, մրցումներու պատասխանատու միութեան ներքին կանոնադրին մէջ յիշուած ձևով եւ պայմանաժամի միջոցին:

ե) խաղացողներէն եւ քովընտի դատաւորներէն զատ ոչ ոքի թող պիտի տայ դաշտին մէջ մտնել առանց իր արտօնութեանը:

զ) Եթէ նկատէ որ խաղացող մը լուրջ կերպով վիրաւորուած է, շուտով խաղը պիտի կեցնէ, վիրաւորեալը դաշտէն դուրս պիտի փոխադրել տայ, անմիջապէս որ

կարելի ըլլայ, եւ անյապաղ պիտի վերսկսի խաղը: Եթէ խաղացող մը թեթեւօրէն վիրաւորուած է, խաղը պէտք չէ կեցնէ որքան ատեն որ զնդակը դաշտէն դուրս ելած չէ: Խաղացող մը որ կարող է իր միջոցներով երթալ մինչեւ բերդի կամ քովընտի զիծերը, պէտք չէ որ նախնական դարձաններ ստանայ խաղադաշտին վրայ:

է) Բացառիկ իրաւասութիւն ունի վերջնական կերպով վտարել դաշտէն առանց նախապէս ազդարարութեան, սեւէ խաղացող որ կատաղի վարժունք մը ունեցած է ուրիշ խաղացողի մը հանդէպ:

ը) Խաղը վերսկսելու նշանը պիտի տայ ամէն տեսակ դադարէ վերջ:

ԳՆԳԱՍԷՐ

(շարունակելի)

ԿԱԶՄԵՑԻՔ ԼՄՂՄԻ ԽՈՒՄԲԵՐ ՀՈՆ, ՈՒՐ
ԶԿԱՆ, ԻՍԿ ՀՈՆ ՈՒՐ ԿԱՆ ԱՐԳԷՆ, ՊԱՀԱՆՋԵՑԻՔ ՈՐ
ԿԱԶՄԵՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐ:



ՄԱՐՍԷՅԻ ԼՄՂՄԻ Ա. ԽՈՒՄԲԵՐ
1944—45 ի Բրովանսի ակումբեան (Ա. բաժանում)

Հ. Մ. Ը. Մ.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿՈՉԸ ԵՒ ՆԵՐԳԱՂԹԸ

Հայ իրականութեան մէջ ամէն անգամ որ բախտաւոր եւ անբախտ հաւաքական շարժումներ մօտալուտ եղած են, կարծես թաքուն ուժ մը մղած է երիտասարդութիւնը ի մի հաւաքուիլ, պատրաստուիլ դիմադրելու համար այդ դէպքերուն:

1918ի պատերազմէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի կազմութիւնը կարելի է վերադրել այդ տեսակ նախադրացումի մը: Հազիւ թէ ի մի հաւաքուած էին բոլոր մարզական միութիւնները, ստեղծուած էին առաջին սկաուտական խումբերը, առիթը տրուեցաւ անոնց կիրարկելու դործնական ղեկունի վրայ իրենց բոլոր կարողութիւնները:

Գաղթականներու հոծ կարաւաններ, որբերու ստուար խումբեր, այրիներու խիտ թափօրներ կը հասնէին Պոլիս ամէն օր: Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները անմիջապէս լծուեցան դործի: Հիմնեցին առաջին Կարմիր Սաշի կայանը, կազմեցին շրջուն Կ. Սաշի խումբեր, սկսան հիւանդներու նախնական դարմանումին, հոգ տարին բոլորին պարենաւորման, ձեռնարկեցին հագուստներու հաւաքումին, սարքեցին հանդէսներ եւ հանդանակութիւններ ի նպաստ անոնց, կատարեցին բօքարտներու վաճառում, մէկ խօսքով եղան գաղթականներու նախախնամութիւնը, անխոնջ կերպով դիչեր ցերեկ վազելով, տքնելով, աշխատելով, համեստօրէն, անձնուիրաբար, առանց ակնկալելու որեւէ վարձատրութիւն կամ զնահատանք:

Դեռ կը յիշեմ այն անբուն դիչերները զորս անցուցած ենք մէկ քանի սկաուտներ, զէն ի ձեռին հսկելով Պոլսոյ արուարձաններէն մէկուն մէջ զանուող որբանոցի մը մէջ, ուր ղետեղած էինք մեր ջանքերով Թուրքերուն ձեռքէն խլուած հայ հայ որբուկներ, եւ զոր թուրք խուժանը քանիցս փորձած էր հրդեհել:

Այդ օրերուն էր որ անգլիացի սկաուտական բարձրաստիճան անձնաւորութիւն մը, ի տես սոյն զործունէութեան, բացազանչեց. « Մենք ստեղծեցինք սկաուտութիւնը, իսկ Հայերը կատարելագործեցին զայն »:

Հ.Մ.Ը.Մ.ը Պոլսոյ եւ արուարձաններու մէջ իր ունեցած հսկայ զործունէութեան առընթեր, կազմակերպեց սկաուտական առաքելութիւններ: Խումբեր ընկերացան Յունաստան կամ այլուր փոխադրուող գաղթական ու որբերուն: Ամէն գաղութի մէջ ամէն վայրկեան անոնք աշակցեցան աղէտեալներու, կարօտեալներու տեղաւորման ու անոնց Ֆիզիքական ու բարոյական բարձրացման: Այսպէս անոնք մէկ տարուան իրենց զործունէութեամբ դարձան անհրաժեշտ եւ նախախնամական մէկ տարրը հայ ժողովուրդի կեանքին մէջ, իբրեւ հոգւով եւ սրտով սկաուտներ: Ի՞նչ փոյթ անոնց համար ճանչցուիլ միջազգային կազմակերպութեան, ի՞նչ պէտք ունէին անոնք պճնազարդ հազուատներով մասնակցելու իրաւունքն

ստանալ օտար երկիրներու մէջ սարքուող ճամբարներու կամ հանդէսներու: Անոնց աբսիւն թաքուն փափաքը մէկ է, այն է կարողանալ օր մը մայր հայրենիքի ծաղկապարզ դաշտերուն մէջ կատարել իրենց բանակումը, եւ լսել իրենց զուարթ երգերուն արձագանդը հայրենի լեռներուն մէջ:

Եւ ահա այսօր, մօտալուտ կը թուի այդ երանելի օրը: Մայր հայրենիքը կը կանչէ իր գուսակները. ներգաղթի արձանագրութիւնները սկսած են, եւ անոնց մեծագոյն տոկոսը կը կաղմեն Հ.Մ.Բ.Մ.ի սկսուածներ իրենց բազմակից ընտանիքներով: Միութեան շարքերուն մէջ ետուղեւոր սկսած է: Աւանդական նախազգացումը կը մղէ Հ.Մ.Բ.Մ.ը կատարելու զօրակոչ, ամէն կողմ մասնաճիւղերը կը վերակազմուին, շարքերը կը ստուարանան, սրտեղբ դուռնագոունդ շարժի դէպի մայր հայաշխարհի շորս կողմերէն հայ ժողովուրդը դնդագունդ շարժի դէպի մայր հայրենիք, ան զինքը չըջապատուած պիտի գտնէ Հ.Մ.Բ.Մ.ի սկսուածներով, որոնք իրենց կաղմակերպիչ կարողութիւնը ի սպաս պիտի դնեն իրենց ազգակիցներուն, հարթելով ճամբորդութեան դժուարութիւնները, դարձանելով տկարները, խրբախուսելով տատամտողները, սկսուածական ժպիտը տարածելով ամէն շարքի մէջ եւ ճշմարիտ հոյիւններու պէս առաջնորդելով զանոնք դէպի գերագոյն հանգրուանը՝ մայր հայրենիք: Ու հոն, Հ.Մ.Բ.Մ.ի սկսուածը, հայրենիքի սուրբ հողը ծնրադիր համբուրելէ ետք, երջանկութեանէ թրջած աչքերը յառած դէպի այնհեր Աբարատը, պիտի տայ իր սկսուածական բարեւը, իր զողորմուն չրթներով պիտի մրմնջէ իր երգումին առաջին յօդուածը. Պատուոյս վրայ կ'երգուում... ծառայել հայրենիքիս:

Հ.Մ.Բ.Մ. հպարտ կը զգայ ինքզինքը, յայտարարելու թէ իր 28 տարուան հայրենասէր քաղաքականութիւնը սկսած է տալ իր արդիւնաւոր պտուղները: Մար -

մնակրթական եւ սկսուածական այս Միութիւնն է որ վերջին ահաւոր պատերազմի վաղորդաշինն, մայր հայրենիքի հեռու դէպքերու բերմամբ իր ընդհատուած յարաբերութիւնները վերահաստատելու մըտք, առաջինը հանդիսացաւ Սփիւռքի մարզական միութիւններէն, զրկելու իր տասնեակ հազարներով մարդիկներու անուամբ մարզական սիրալիւր ողջոյններ, հայրենիքի հողը իրենց խրոխտ քայլերուն տակ թնդացնելու երջանկութիւնը վայել լող իրենց մարդիկ եղբայրներուն:

Հ.Մ.Բ.Մ.ի առժամեայ կեդր. վարչութիւնը ստացաւ Հայաստանի պետական իշխանութեանց շնորհակալութիւնը եւ ջերմ մաղթանքները

Պատեհադմի առթիւ խորտակուած կամուրջը վերականգնուած էր հայրենիքի եւ Սփիւռքի մարդիկներուն միջեւ: Հ.Մ.Բ.Մ.ի պաշտօնական հանդամանքը ճանչցուած էր անգամ մը եւս, եւ հայրենիքի պատասխանատու ղեկավարները կը խոստանային, իրենց նամակին մէջ՝ Հայաստանի եւ արտասահման գտնուող զաղթահայ մարդիկներուն միջեւ փոխադարձ կապը օրըստօրէ ամրապնդել:

Սոյն հմայիչ խոստումին զօրծաղրութեան դրուիլը երկար չտեսց, եւ ատիկա աւելորդ ապացոյց մըն է մեր հայրենիքին գլուխը գտնուող պետական անձնաւորութեանց զօրծունեայ եւ ձեռներէջ ուղիին: Խանդավառութեամբ կարգացուցաւ ամէն կողմ հայրենիքի կոչը Սփիւռքի հայ մարդիկներուն ուղղուած, հրաւիրելով զանոնք Հայաստան: Ետուղեւոր եւ տենդագին զօրծունէութիւնը ծայր տըւած են Հ.Մ.Բ.Մ.ի բոլոր մասնաճիւղերուն մէջ: Անոնք ընդառաջ երթալով սոյն կոչին, սկսած են զօրահաւաքի: Ու անգամ մը եւս ապացուցանելու համար թէ Հ.Մ.Բ.Մ.ը անհատներու եւ մասնաւորներու Միութիւն մը չէ, այլ կը պատկանի բոլոր հայ ժողովուրդին, անոր վարիչները պիտի չզոհանան ընտրելով միմիայն Միութեան անդամ մարդիկներ, այլ եթէ կան ուրիշ Միութեան կամ առանձին զօրծող կարող մարդիկներ, անոնք եւս պիտի

ԲԱՐՉՐԱՑԻՐ, ԲԱՐՉՐԱՑՈՒՐ

Մեռած է՝ եւ մեր կնիքահայրը, Պետրոս Պ. Ատրուներն:

Տարեց թէ երիտասարդ՝ հայ-արի ընկերներուս հետ՝ կը խոնարհինք այդ մեծ հայրեհնաւէրին շիրմին առջեւ ու կը մրմնջենք՝ լռի՛ն սաշտամունքով մը.

« Մեր անմահներէն մին ես դուն... »

Ատրուներն հեղինակն է՝ Հայ-Արիներու զմայլելի դօտի-խորհրդանշանին, նորա-ծաղ արեւի ճառագայթներով ողորուող Արարատի դադաթին երկու կողերուն քանդակուած՝ բարձրացի՛ր՝ բարձրացո՛ւրին: Գիւտ մը՝ որուն հայրենասիրական խորունկ իմաստն ու ինքնատիպ վեհութիւնը զնահատելու համար, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդր. Վարչութիւնը ձեռաչէն ոսկիէ դօտի մը նուիրած է անոր:

Այցելու դաստու չափազիտութեան՝ բարձրագոյն վարժարաններու՝ Պոլսոյ մէջ միջազգային սերունդներ հասցուցած է անիկա: Ու իբրեւ արժէքաւոր մանկավարժ դաստիարակ՝ ու իբրեւ հայ հեղինակ մանաւանդ՝ Ատրուներն ուղած է իր ցեղիկն ներաշխարհէն ժայթփող՝ մեծ

կտակ մը ձգել՝ սերունդէ սերունդ հայ Արիներուն:

Բարձրացի՛ր՝ բարձրացո՛ւր:

Սկաուտական համաշխարհային «Բան-թէն»-ին մէջ՝ Պէյտըն Բաուլի կողքին՝ տեղ ունի Ատրուներն իր բարձրացի՛ր՝ բարձրացո՛ւրովը. արժանիք մը, որուն՝ երկրազունդի ոչ մէկ արի պիտի կրնայ, կամ ուղէ, դէմ արտայայտուիլ:

Ի՞նչ է հիմնական նպատակը սկաուտիկի, որուն իւրաքանչիւր ազգ տուած է ինքնայատուկ անուն մը, որ իր խորքին մէջ, սակայն կը մնայ նոյնը՝ բոլորին համար: Մարմնով քէ մտքով առողջ պատանիներ պատրաստել, որպէսզի՝ կեանքի պայքարին պատրաստուող երիտասարդութիւնը, որպէսզի՝ ընտանիքի, զաւակներու պատասխանատու պետը՝ հայրը, որպէսզի՝ ընկերային մեծ հաւաքականութեան մը՝ պետութեան մասնիկը կազմող քաղաքացին, արժանաւոր կերպով կատարէ իր դերը, «բարձրացուր»-ը, որ՝ իր լինելիութեան կոչումն է պարզապէս:

Զի բաւեր, բնա՛ւ, պատրաստուած

արձանագրեն այդ երանելի ուխտագնացութեան համար:

Եւ ի՞նչ աւելի բարձր վարժատրութիւն հայ մարդիկին համար: Հայ մարդիկին, որ տարիներով կորսուած աննպաստ եւ տարամերժ միջավայրերու մէջ, իր բոլոր կորովը իդորձ դրած է չխելու, չձուլուելու համար, եւ պրկելով իր ջիղերը, յաղթելով բարոյական թէ նիւթական խոչընդոտներուն, կրցած է հասնիլ Փիղիքա-կան եւ հոգեկան բարձրութեան մը, որպէսզի օր մը նուիրէ իր անձն ու մկանները մայր հայրենիքին:

Ահա հասած է այդ օրը Ան պիտի կարողանայ հպարտօրէն կատարել իր մարդական փորձերը հայրենիքի ծաղկազարդ պաշտերուն մէջ, ազգային բարձր ոգիով

տողորուած հայրենակիցներուն առջեւ եւ հայ հարազատ կուրծքերէ թռչող խանդավառ եւ խրախուսիչ կանչերուն ի լուր: Ու երբ անոնք առարկայ դառնան հայ բարձրաստիճան անձնաւորութեանց շնորհաւորութեանը եւ զնահատանքի արտայայտութեան, պիտի յիշեն թէ շատ բան կը պարտին Հ.Մ.Ը.Մ.ին, որ դրած է հայրենասէր ու մաքուր մարդական ոգին ոչ միայն իր անդամներուն, այլ եւ անոնց մեղուաջան աշխատութեան շնորհիւ իր շարքերէն դուրս գտնուող երիտասարդներուն սրտին մէջ եւս:

Գացէ՛ք, ողջունեցէ՛ք հայրենիքը, հայ երիտասարդներ, Հ.Մ.Ը.Մ.ը հպարտ է ձեզմով:

Ք. ԺՊՏՈՒՆԻ

դուրս դալ, զիտուեթիւն, պաշար, հա -
բըստուեթիւն ամբարել՝ աթոռ ունենալու
համար մարդկութեան պատուանդանին
վրան՝ ուր «ընտրեալները» միայն աեղ
կը գրաւեն:

Բարձրացիր՝ բարձրացուր ուրեմն: Օգ-
նէ, ձեռք տուր այն հաւաքականութեան
ծառին, որուն ճիւղերուն պլլուելով հա-
սեր ես դուն վերի յարկի բարձրութիւն-
ներուն...:

Բարձրութիւնդ՝ հայ արի՛, անհատ,
հայրենակից, համեմատական է քու
վարքիդ հետ, հոգեկան բարձրութեանդ
հետ...: Քու իրական բարձրութիւնդ չա-
փանիչն է՝ քու թափած ճիւղիդ՝ որ, ու-
րիչները, ընտանիքդ, նմաններդ, հայրե-
նիքդ բարձրացնելու կը ձգտի:

« Սկառուտը կը սիրէ բոլոր սկառուտնե-
րը՝ իր եղբոր պէս: »

Կը բարձրանաս իրապէս՝ երբ կը բար-
ձրացնես:

Բա՞րձր է այն քաջը՝ որ իր սուրբ չի
շարժեր տկարներու պաշտպանութեան
համար: Բա՞րձր է այն զիտունը՝ որ իր
փորձարկութիւնները չի տրամադրեր հա-
ւաքական բարձրութեան: Բա՞րձր է այն
ունեւորը՝ որ իր ոսկիներէն բաժին չի հա-
ներ իրմէ նուազ բախտաւորներու կարիք-
ներուն:

Բա՞րձր ես, բարձրացուր, եթէ ոչ՝ ժո-
ղովուրդը, է՛ն արդարը դատաւորներուն,
իր արժանաւոր ներկայացուցիչներուն
բերնով՝ կը քնարերգէ քու իրական բար-
ձրութիւնդ:

« Թ՛քել եմ՝ քու էլ, փողիդ էլ վրան: »



Հայ Սկառուտիգմի հիմնադիրները՝ Ատ-
րունիներ, Յակոբեաններ, ձիգմէճեան -
ներ, Շահինեաններ, Մինասեաններ, Թաշ-
ճեաններ, Ուշազլեաններ, սնած XIX-րդ
դարու հայ ազգային վերազարթումի տի-
տաններուն նեկտարէն՝ հեռատես հայրե-
նասիրութեամբ մը, կաշկանդուած խորթ
կլիմաներու տակ, յաւիտենական դաւա -
նանք մըն են տուած՝ երկու բառով՝ հայ

արիւն, որպէսզի անիկա՝ կիրարկուածով
իր դաւանանքին հիմնական սկզբունքին՝
— Բարձրացիր՝ բարձրացուր — բարձրա-
նայ մարմնով, հոգուով, քէ սրտով, ու
իր ոյժը տրամադրէ իր հայրենիքին, որ՝
Արարատի քղանցքներուն վրայ ծաղկած՝
կը բարձրանայ ու կը բարձրացնէ արդէն
այսօր: Վկայ՝ 25 տարուայ նուաճումնե-
րը անոր, ու դուրգուրանքով պատրաս-
տակամութիւնը՝ իր հացն ու տանիքը
Սփիւռքի հայրենակիցներուն հետ բաժնե-
լու սիրայօժար տրամադրութեան:

Կը բարձրանայ Հայրենիքը եւ կը բար-
ձրացնէ: Մենք ալ ուրեմն՝ օգտուելով ա-
րեւմտեան երկիրներու քաղաքակրթական
անհուն կարելիութիւններէն՝ բարձրա -
նանք, ու մեր ուսերը ղնենք մէկ կողմը
լծակին, որպէսզի սահի դուրսը Արա -
րատեան Դաշտերու երկայնքին, ու՛ լեց-
ուին Շիրակայ ամբարները նորէն:

Բարձրացի՛ր, Հայ Արի՛. ու բարձրա -
ցո՛ւր Հայրենիքդ: Գիտակցէ՛ քու կոչու-
տիդ, երբ հիմա մանաւանդ՝ յենակէտ
մը ունիս կոթնելու: Երբ հիմայ մանա -
ւանդ՝ Հայրենիքդ թեւերը կը բանայ քու
առջեւ, ու իր վերկը կը հրաւիրէ քեզ:
Արժանի դաւալը եղիր անոր, որպէսզի
հրճուին ողիները Ատրունիներու...:

Օրը անդամ մը, լռի՛ն ժամերուդ, կըը-
կնէ քու երզումդ ու խորհրդածէ:


« Պատուոյս վրայ կ'երզնո՛ւմ ըլլալ
հաւատարիմ դաւանանքիս եւ ծառայել
Հայրենիքիս: »

Բարձրացի՛ր՝ բարձրացո՛ւր:

Ա. ԿԱՊԵՆՅ

Նախկին փ. խմբապետ Մաքրի-Գիւլի
II խումբի (Պոլիս):

(*) Իր մասին, յառաջիկային, պիտի
արտայայտուիմ շատ աւելի մանրամասն:
Կ'արժէ: Իբրեւ իր պաշտպանեալ սանը,
պարտքս է ատիկա:



Հ.Մ.Բ.Մ. ԵՒ ՀԱՅ ՍԿԱՌԻՏ ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՇՈՒՐՉ

1918ին, Միութեանս հիմնադիր անդամները, երբ անուն մը կը փնտռէին մկրտելու այս նուիրական շարժումը, եկան եւ կանգ առին, այսօր Սփիւռքի ծանօթ անուանակոչման առջեւ: — Փոխանակ՝ Հ.Մ.Բ.Մ. եւ Հայ ֆուլթուրիստներ, Հ.Մ.Բ.Մ. եւ Հայ Աթլէթներ կամ Հ.Մ.Բ.Մ. եւ Հայ Մարդիկներ կոչելու, մկրտեցին՝ Հ.Մ.Բ.Մ. եւ Հայ Սկաուտներ, որովհետեւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն բացատրութիւնը իր մէջ կը բովանդակէ ոտնադնդակի, մարմնակրթութանքի զանազան ձեւերու, խմբական թէ անհատական փորձ, մրցում եւ խաղեր, բայց ո՛չ սկաուտութիւնը որ միայն կ'իւրացնէ ընդհ. դաստիարակչականը, մանկավարժականը: Ուստի մեզի ծանօթ, այդ պաշտելի չորս զիրերէն անմիջապէս յետոյ՝ «եւ» չաղկապը ու առանձինն «Հայ Սկաուտ» բառը աւելցնել հարկ տեսան:

Մեր հիմնադիրները 1918ին իսկ զարծը մանկավարժօրէն նկատի առնելով տեսան թէ Հ.Մ.Բ.Մ. ասացուածքը, սկաուտութեան իմաստը չի կրնար ներկայացնել եւ ամփոփել: — Անմիջապէս ըսեմ որ բոլոր անոնք որ այս խորհրդածութիւնները կարդալով պիտի տիրին կամ ուրախանան, կարծելով թէ՛ Հ.Մ.Բ.Մ. ի եւ Հայ Սկաուտութեան միջեւ անջատում մը կուզեմ տեսնել, չարաչար կը սխալին: Որքան ատեն որ Սփիւռքը դոյութիւն ունի, որքան ատեն որ Հայ պետականութիւնը, աշխարհիս չորս ծագերուն ցիր ու ցան հայութիւնը չի կրնար իր հպատակները, իր քաղաքացիները նկատել, եւ որքան ատեն որ պետական, կրթական-նախարարութիւն մը չի կրնար պաշտօնապէս մեզի ուղեցոյց բլլալ, այնքան ատեն, եւ սպասելով այդ փառապանծ օրերուն, եւ Թըրքահայաստանի, այսօրուայ մեր սիրելի Հայաստանին կցման, պէտի է կոչուինք՝ Հ.Մ.Բ.Մ. եւ Հայ-Սկաուտներ, մի՛ եւ անրաժան:

Այլ եւ այլ մարդական թէ սկաուտական անջատ միութիւններ, հոս ու հոն ցրուած, կը վնասեն մէկ ճակատ կազմելու, մէկ սիրտ մէկ հողի ներկայանալու, մեր ջանքերուն ու ձգտումներուն: Որքան ատեն որ, վերոյիշեալները Հ.Մ.Բ.Մ. եւ Հայ Սկաուտներ համազգային կազմակերպութենէն դուրս են, որքան ատեն որ միաբանութեամբ չենք ներկայանար, երիտասարդական, մարմնակրթական եւ ընդհ. դաստիարակչական դեմնին վրայ, մեր ազգային իդձերը կը մնան ամուլ եւ անհետեւամ: Այո՛, այն օրը երբ, ամէն բան կարգի կը մտնէ եւ Խ. Հայաստանի կառավարութիւնը մասնաւոր որոշումով կ'անջատէ մարմնակրթականը, մարմնամարդականը եւ սկաուտական կազմակերպութիւնները, եւ տէր ու տիրական կը կանգնի արտասահմանի ալ, այն ատեն, եւ ա՛յն ատեն միայն, այդ որոշման, առաջին ծափահարողներէն մին կը հանդիտանամ:

Սոսինք քիչ մըն ալ մեր ներքին անց ու դարձերուն վրայ: 1918էն մինչեւ օրս՝ 1946, քսանեութը տարիներ են անցեր. յեղաշրջումներ են տեղի ունեցեր, սա - կայն, բազմաթիւ են անոնք որ մեր մէջ, մինչեւ օրս չեն բմբռնած, հակառակ իրենց իսկ ընտրած նշանարանին, այդ անսպառ զանձին՝ « բարձրացիր-բարձրացուր » ին, մարմնակրթանքին եւ մանկավարժական տեսակէտներու միջեւ եղած հսկայ տարբերութիւնը, բլլայ վարչական, մասնագիտական, ծրագրի եւ կանոնադրի, խոտոր համեմատութիւնը. ինչո՞ւ մէջ կը բերեմ ասոնք, որովհետեւ սրտցաւ Հ.Մ.Բ.Մ. ական սկաուտ մը, տարիներէ իվեր, երկա՞ր տարիներ, կ'ապրիմ ու կը զգամ այդ անկանոնութիւնները. դեռ չեմ ուզեր գրել, Ազգ. զանազան կազմակերպութեանց, Հ.Մ.Բ.Մ. ի եւ Հայ-Սկաուտներու դէմ զործած ծանր աւերներու մասին (բաժնէ՛ որ տիրես): Այսօր, դէպքերը,

ԱԹԼԵԹԻՔ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ ԲՈԼՈՐԻՆ ՀԱՄԱՐ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳԻՏԵԼԻՔ ՄՐՅՈՒՄԻ ԺԱՄԱՆԱԿԸ ՁՍՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ըստ մարզական կանոնադրութեան առնուազն երկու ժամանակաշափներ (քրոնոմէթր) պարտաւոր են առնել վազքի մրցումներու ժամանակը: Այս պաշտօնը խղճմտօրէն կատարել այնքան ծանր է, որ յաճախ չորս ժամանակաշափներ դժուար թէ նոյն ժամանակը ճշգրտօրէն տան:

Որովհետեւ, երկու պայմաններ անհրաժեշտ են մրցման մը ճիշդ ժամանակը առնելու համար:

Մէկը — ժամանակաշափն անձը պէտք է որ արագ եւ ճշգրիտ գործելու ընդունակութեան միացնէ, երկրորտեւ փորձառութեան մը առաւելութիւնը:

Միւսը — պէտք է որ օժտուած ըլլայ առաջնակարգ գործիքով մը, որ դոնէ տարին անդամ մը, մասնագէտի մը կողմէ քննութեան ենթարկուի:

Շուկայի վրայ, շատ մը աժան գործիքներ կարելի է դնել, որոնք 1/5րդը բոլորէն կը նշանակեն, բայց այս ժամացոյցներէն շատերը կրնան օգտակար ըլլալ միայն մարզանքի հաւաքոյթի կամ երկրորդական մրցումներու մէջ, ցոյց տալու համար, մօտաւոր բան մը, բայց երբէք ճշգրիտ ժամանակը:

ՈՒՐԻՇ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Իրողութիւն մը որ գործիքէն դատ, կը

դժուարացնէ ժամանակը ճիշդ չափելու հարցը, այն է որ, յաճախ ուշադրութիւն չի դարձուիր ժամաչափներուն կեցած տեղին: Ըմբռնական հաւաքոյթներուն մէջ, աւելի կարեւորութիւն կը տրուի դիտնալու թէ ո՞վ շահեցաւ վազքը, քան թէ դիտնալու թէ շահողը որքա՞ն ժամանակ դրաւ:

Այս պայմաններու մէջ, ժամանակը չափելու յատկացուած անձեր դիւրութեամբ կ'ենթարկուին իրենց բախտին, եւ կը կենան հանդիպած տեղը, փոխանակ ուշի ուշով եւ խղճմտութեամբ ընտրելու կէտ մը, ուրիշ կարենան յստակ տեսնել մըրցման անցուդարձերը եւ մանաւանդ վերջին բոլորէն:

Այս դժուարութեան առջեւն առնուած է առաջնակարգ մրցարաններու մէջ, ժամանուածի զիծին երկու կողմերը կանդնեցնելով բարձրաւանդակներ, ուր կրնան տեղ բռնել երեք գատաւորներ եւ երեք ժամաչափներ:

ՁԱՅՆ ԵՒ ԼՈՅՍ

Արդի ժամաչափները մեծագոյն դժուարութեան մը կը բաղդին անով որ յաճախ չեն կրնար ճիշդ ատենին շարժման մէջ զնել իրենց ժամացոյցը, մեկնումը ծանուցանող ատրճանակի հարուածին հետ:

ազգային ընդհ. շահերուն տեսակէտով՝ տարբեր են. պէ՛տք է Հ.Մ.Ը.Մ.ի գլխաւոր պատասխանատուութեամբ (տեսակ մը մարմնակրթական գործաւարութիւն Սփիւռքի) տանք սկառուտութեան զօրաւոր եւ միատարր վերին Մարմին մը, պէ՛տք է տանք Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտութեան, ներկայ ծրագիր-կանոնադրէն ալ աւելի դորձնական ամփոփ յօդուածներ՝ ներկայիս հայ իրականութիւնը վարող պայմաններու նախատեսութեամբ:

Սկառուտական վերին Մարմինը կազմող վճռական եւ յանդուգն նկարս բով անձե-

րու ղեկավարութեան տակ, շարժման ծաւալումը եւ օղուտը կը պահանջեն անձնուէր երիտասարդներու փաղանդ մը՝ « բարձրանալու եւ իրենց կարգին բարձրացնելու » ազնիւ տրամադրութեամբ տողորուած:

Այսպէս միայն Սփիւռքի հայութիւնը կ'ապահովէ իր դժուարութեան եւ ազգ. դիմագծի պահպանման համար մեծ նպատակը՝ որ կը սպասէ Հ.Մ.Ը.Մ.էն եւ անոր կազուած սկառուտական շարժումէն:

ԺԻՐԱՅՐ Ա. ՄԻՆԹԱՆՉԵԱՆ

Եւրոպայի մէջ բազմահարուած ատրո-
ճանակի հետզհետէ տարածուած զործա-
ծութիւնը, մէջտեղէն բոլորովին վերցնել
տուաւ սեւ վառօղբ եւ անոնք որ բնազի-
տական ծանօթութիւններ ունին, զիտեն
թէ ճայնով ստացուած նշան մը երկվայր-
կեանի մէջ կը կտրէ 393 մեղր, օգի ջեր-
մութեան 0 աստիճանով, եւ 140 մեղր՝
15 աստիճանով, մինչդեռ լոյսի արագու-
թիւնն է 300.000 քիլոմեղր բոպէի մէջ,
ինչ որ կը նշանակէ թէ, բազմահարուած
ատրոճանակէ, կամ անծուխ վառօղի զըն-
դակի համար շինուած ատրոճանակով ազ-
դարարութիւն ստացող ժամաչափ մը, ու-
րիշ միջոց չունի, եթէ ոչ հարուածին
ճայնին ակննջ տալ. հետեւեանք կ'ըլլայ
այն որ կամայ ակամայ, 100 մեղրի վրայ
շահողը կը նպաստաւորէ մօտ 3/10րդ երկ-
վայրկեանով: Այսուհանդերձ, կանոնա-
գրութիւնը բացայայտ է այս կէտին վը-
րայ. կը պահանջէ որ ժամացոյցը շար-
ժման մէջ գրուի «բոց»ին հետ միասին:
Պայծառ օդով, ինչպէս յունիսին եւ յու-
լիսին, շատ դժուար է ժամանակը չափե-
լու սկսիլ «բոց»ին նշանին վրայ:

Երկար վազերու վրայ, շատ քիչեր
ճիշդ կերպով կը հասկնան ժամանակը չա-
փելու կարեւորութիւնը: Շատ ժամաչափ-
ներ կը դոհանան փորձի ամբողջական տե-
ւողութիւնը եւ միջանկեալ հեռաւորու-
թիւններու տեւողութիւնը առնելով: Ան-
շուշտ, անոնց առաջին պարտաւորութիւնն
է հանրութեան եւ պաշտօնական անձերուն
տեղեկութիւն տալ՝ կատարուած փորձին
արժէքին մասին. բայց նաեւ պէտք է որ
օգնեն վաղողներուն ալ, որքան թոյլ կու-
տան պայմանները, անոնց յայտնելով
վաղքին արագութեան աստիճանը՝ ժամա-
ցոյցի միջոցով:

Այդպէս կարենալ ընելու համար, ժա-
մաչափը պէտք է որ լաւագոյն ժամացոյ-
ցը ունենայ իր տրամադրութեան տակ.
բայց պէտք է նաեւ որ ընդհանուր կերպով
ընդունուած կէտէն զատ, ուրիշ աւելի
յարմար կէտի մը վրայ հաստատէ իր դի-
տարանը, որ յաճախ, ժամանումի դիժին
վրայ կը գտնուի: Ասոր գլխաւոր թերու-
թիւնը այն է որ, այն պահուն ինքը կը

նշէ ժամը, վայրկեանով, երկվայրկեա-
նով եւ նոյնիսկ հինգերորդով, առաջին
հասած մրցորդը արդէն հետու է եւ եթէ
զլուխը չզարձնէ, ոչինչ կրնայ լսել, ա-
ռանց իր վազը դանդաղեցնելու: Ամէն
մէկ շրջանի վերջաւորութեան, ժամանա-
կը յայտարարելու համար, լաւագոյն
դիրքն է կենալ ժամանումի դիժէն մօտ
10 մեղր անդին, այնպէս որ ժամաչափը
ժամանակ ունենայ հասնող մրցորդը տես-
նելու, ժամացոյցը նայելու եւ ճիշդ ժա-
մանակը յայտարարելու, այն պահուն որ
առաջին մրցորդը կը հասնի իր քով: Ա-
ռանց պահանջելու որ ամէն մէկ մրցորդի
իր ժամանակը ըսուի, լաւ կ'ըլլայ որ ա-
նոնց զաղափար մը տրուի մրցումի ըն-
թացքին մասին, անոնց հաղորդելով ա-
ռաջին հասնողին ճիշդ ժամանակը:

Գալով մեկնումի նշանը տուողին, պէտք
է որ մեծ փորձառութեան տէր, յուզումի
կամ ջղայնութեան անընդունակ մէկը ըլ-
լայ: Բաւական տարեց մէկը ըլլալու է,
որպէսզի կարենայ որոշ հեղինակութիւն
ուսնեալ մրցորդներուն վրայ, որոնք կու-
զան իրեն վստահիլ իրենց բախտը՝ չա-
փով մը:

Մեկնումի նշանը տուող անձին կեցած
վայրը ճշտելու համար, երկու պարագայ
պէտք է նկատի ունենալ. — պէտք է որ
տեսնէ, եւ տեսնուի:

ՏԵՍՆԵԼՈՒ ԱՄՄԱՐ, — պէտք է կարե-
նայ տեսնել մրցորդները եւ զիտել անոնց
ամենէն փոքր շարժումները: 100 — 110
մեղր վազքի մը համար, ուղիղ գծի մը
վերջաւորութեան վրայ, լաւ զիրք մը
զբաւած կ'ըլլայ, եթէ կենայ մեկնումի
դիժէն 3—5 մեղր ետեւ, քիչ մը քովըն-
տի, որպէսզի կարենայ զիտել սրունքե-
րու եւ բաղուկներու մկանները. որովհե-
տեւ, բացայայտ է որ եթէ կանգ առնէ
մեկնողներուն ճիշդ ետեւը, միայն մըր-
ցորդներուն կոնակը կրնայ զիտել: «Սան-
դաձ» մեկնումի մը մէջ, լաւ է, որ
կենայ արահետէն դուրս, այնպէս որ կա-
րենայ մեկնողները տեսնել, որպէսզի
ստուգէ թէ ամէն մէկը իրեն յատկացուած
նշանէն դուրս չէ ելած, ինչ որ յաճախ-

դէպ է ջղային մրցորդներուն համար:

Մեկնումի նշանը տուողներուն մէջ՝ կան որ գիծէն հետու, (20 մեղր) կը կենան. բայց ատիկա անպատեհութիւններ կը ներկայացնէ. առաջինը այն որ չեն կրնար ճիշդ ժամանակին՝ մեկնումի նշանը տալ:

Ուրիշներ՝ նշանը կուտան մրցորդներուն քովը կենալով, իրր թէ ստուգելու համար որ անոնք մէկ գիծի վրա՞ն են: Այս ձևեր իր օգուտը կ'ունենաք, երբ բազմաթիւ խումբ մըն է որ պիտի մեկնի: Բայց դժուար է փոքր հեռաւորութիւններու համար այս եղանակը կիրարկել, որովհետեւ, մրցորդները կ'ազդուին ատորձանակին տեսքէն եւ կը ջանան, առաջին քայլը առնելու համար, չփախցնել այն բոպէն, երբ մատը կը կոխէ ատորձանակին բլթակին վրայ:

ՏԵՍՆՈՒԵԼՈՒ ԼԱՄԱՐ.—Նշանը տուողը պէտք է տեսնուի պաշտօնական անձնատուրութիւններէն, դատաւորներէն եւ ժամաչափներէն: Պարզ է որ ժամացոյցները ճիշդ ատենին պէտք է շարժման մէջ դըրուին, ինչպէս դատաւորները պէտք է որ կարենան հետեւիլ մրցումին, անմիջապէս որ մրցորդները ճամբայ կ'ելլեն: Այս պատճառով ալ, մեկնումի նշանը տալու

համար, պէտք է նկատի ունենալ օղին պայծառութեան պայմանները:

ԼՐԱՄԱՆՆԵՐ.— Ատորձանակի հարուածէն առաջ, կը տրուի երկու հրամաններ, որոնց վրայ կը հիմնուին մեկնումի բոլոր շարժումները: « Ամէն մարդ իր տեղը » կամ « ամէն մէկը իր նշանին վրայ », համաձայն մրցումի տեսակին:

Մեկնումի նշանը տուողը, առանց աճապարանքի, բայց ուժեղ ձայնով, քիչ մը երեքելով՝ կը հրամայէ, — « պատրա՛ստ»... որպէսզի, մրցորդներու միտքին մէջ շտպաւորուէ այն գաղափարը թէ՛ անմիջապէս յետոյ պիտի արձակէ ատորձանակի հարուածը: Պէտք է նաեւ ապահովել որ ամէն մէկը իր տեղն է, որ եւ է մէկը անականակալի չպիտի գայ եւ վերջապէս՝ անկանոնութիւններ չեն դործուած:

«Պատրա՛ստ»... հրամանին վրայ, մըրցորդները վեր կ'առնեն իրենց ծունկը եւ աստիճանաբար կը բարձրացնեն, առանց բիրտ աճապարանքի հասնելու համար պրկումի այն խէչալ վիճակին, երբ քաջարակ անշարժութեան ժամանակէ մը յետոյ, պէտք է անյապաղ ճամբու դնել մրցորդները:

(Շարունակելի)



Մարտէլի « Տորֆ » մարզական ֆութպօլի խումբը

ԼՈՒՐԵՐ ԳԱՅԱՍՏԱՆԵՆ



ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆՔԸ Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հետեւեալը հատուած մըն է կարեւոր յօդուածիցը արքիւ մը գոր Պ. Մ. Մալում - եան լոյս քննարկեց Հայաստանէ վերադարձին՝ «Ապագայ»ի մէջ :

Սորհրդ. Հայաստանի վարիչները լաւ բարձր են թէ մեր ժողովուրդին ապագան ամբողջը դարձնելու համար պէտք ունին կայտառ եւ ազնուացած, մարմնով եւ մտքով մարդուած նոր սերունդի մը : Բախտը ունեցանք մեր հայրենիքի մէջ ապրելու մէկ ամիս, տեսնելու մեր եղբայրները եւ քոյրերը եւ խանդավառուելու անոնց դործերով :

Մեր երկրին բնակչութեան մէկ հինգերորդը կ'ուսանի եւ կը մարդուի : Մեր երիտասարդութիւնը անցեալի ժառանգութեամբ, ներկայի վերելքով, ապագայի յոյսերով, կը քալէ ճակատը բարձր եւ ժպիտը երեսին, կ'աշխատի, կը սորվի եւ կը մարդուի, իր մտքին ու մասններուն աշխատանքովը ծաղկեցնելու համար հայրենի հողը :

Հարիւրաւոր տարիներէ ի վեր չարչարուող մեր ազգը այսօր դտեր է, շնորհիւ Սորհրդ. մեծ Միութեան, իր փրկութեան նաւահանգիստը եւ միջոցը ապրելու իրր յառաջադէմ ժողովուրդ մը :

Ազատ էին իմ ունեցած տեղեկութիւններս Սորհրդ. Հայաստանի մարմնակեր-

թանքին մասին : Մեզի հասած հատուկ տոր լուրերը եւ թերթերէ առնուած տեղեկութիւնները զոհացում չէին տար մեր հետաքրքրութեան : Ուրախ եմ ըսելու որ ինչ որ հաստատեցի անձամբ լայնօրէն կը դերագանցէր իմ ակնկալութիւններս :

Մեկնելէ առաջ մտաւախութիւնը ունէի որ զուցէ Հայաստանի երիտասարդութիւնըն ալ նմանի արտասահմանի մեր նոր սերունդին, որ կը տղեղնայ եւ հասակով կը կարճանայ : Յունիս 14ին երբ մեր ոտքը դրինք հայրենի հողին վրայ, կը խոստովանիմ որ չէնքերէն ու պողոտաներէն աւելի կը դիտէի բնակչութիւնը, երեսաները : Ժամը 5.30ին երբ հասանք մեր պանդոկը եւ վաղեցինք պատշգամբ, տեսնելու Արովեան փողոցի եռուղիքը, երկարօրէն դիտեցի երիտասարդութեան կոհակը, մանչերու եւ ազջիկներու խումբերը որոնք յամբօրէն կը յառաջանային, բարեձեւ ու հասակաւոր :

Յաջորդ առաւօտ առաջին դործս եղաւ այցելել Ֆիզիկուլտուրայի վարչութեան :

Արովեան փողոցին վրայ չորս յարկանի մեծ շէնքի մը մէջ է ան, ամէն տեսակ յարմարութիւններով օժտուած : Ունի ճրմեռնային մեծ մարդասրահ մը, առաջին յարկը ձմեռնային լողարան (բիսին) մը, տաք եւ պաղ տուշեր, ակումբ, ճաշարան, ննջարաններ, գրասենեակներ եւ սրահներ

դասախօսութեանց համար: Ամէն կողմ կը տիրէ եռուղեւ, մտնող ելլողներու անվերջ շարան մը, ամէնն ալ երիտասարդներ, ուսուցիչ ժախտով կը բարեւեն ու կ'անցնին:

Կը բարձրանանք սանդուղներէն ու զիս կ'առաջնորդեն սպասման սրահ մը ուր քանի մը վաշրկեան վերջ կը մտնէ Հայկ Գարսատանեան, Մարմնակրթական ուսումնարանի տնօրէն, թիկնեղ ու բարձրահասակ երիտասարդ մը, որ բարի դալուստ մաղթելով իր ուրախութիւնը կը յայտնէ որ առաջին այցելութիւնս իրենց համար եղած է, եւ զիս կ'առաջնորդէ իր զրա-սենեակը: Այնտեղ իրարու կը հանդիպին մեր լուռ նայուածքները, փոխադարձ հետաքրքրութեամբ բեռնաւորուած: Վերջապէս կը խզէ ան լուսթիւնը եւ կը հարցրնէ մեր արտասահմանի մարզիկներու մասին, եւ ես երկարօրէն կը պատմեմ, մինչ հետզհետէ ներս կը մտնեն բժշկ Սիմոնեան, փոխ-նախագահ Հայաստանի մարմնակրթութեան կեդր. Կոմիտէի, Երուանդ Մարտիրոսեան, Հայաստանի ըմբշամարտութեան ընդհ. մարզիչ, Գուրգէն Մալխասեան, համամիութենական մարմնակրթանքի մարզիչ եւ դատաւոր, Գէորգ Ալիխանեան, եւն.: Երկարօրէն կը խօսինք ամէնքս, մինչ ժամերը կը սահին եւ ի վերջոյ կը մեկնիմ, ժամադրուելով երեկոյեան համար, աւելի մօտէն ծանօթանալու այն ամէն բաներուն հետ որոնք կը կապուին մեր սիրած դործին:

Հայաստանի մարմնակրթանքի կազմակերպութիւնները երեք մասի կը բաժնուին.

ա) Զանազան կազմակերպութիւններ (միութիւններ), ինչպէս Դինամօ, Սպարտակ, Կառուցող Պիշչէվիկ, Կոլխոզներ, Սոլիսողներ, Սեդիկ, Լոբոմթիվ, եւն.:

բ) Երջանային կազմակերպութիւններ, ինչպէս է Երեւան, Ղուկասեան, Լենինական, Նոր Բայազիտ, Մարտունիի շրջան:

գ) Վարժարաններ. Ուսումնարան (կիմնադ.), Թէքնիքական, Ժողովրդական կրթութեան մարմնակրթանքի դպրոցը, Երեւանի Մոլոտովեան մանկական մարմնակրթանքի դպրոցը, Լուսաւորութեան ժող. կոմիտար. կեդր. մարմնակրթանքի

դպրոցը, Երեւանի Ժողովրդական կրթութեան բաժնի մարմնակրթանքի դպրոցը, եւ այլն:

Բոլոր վարժարաններու աշակերտները առանց բացառութեան պարտաւորիչ կերպով կը հետեւին մարմնամարզի, յետ բժշկական քննութեան:

Մարզանքի մասնադէտ ուսուցիչներ կան բայց բաւարարութիւն չեն տար եղած պահանջին:

Այս տարի կը բացուի Խ. Հայաստանի մէջ մարմնակրթանքի ուսուցչանոց երեք տարուայ դասընթացքով, ուրտեղ պիտի պատրաստուին մասնադէտ ուսուցիչներ մարմնակրթանքի բոլոր ճիւղերուն համար: Առաջին տարուան համար նախատեսուած են 100 աշակերտներ:

Մոկուայի կեդր. կառավարութիւնը 10 միլիոն ռուպլի պիտուէ մը տրամադրած է:

Խ. Հայաստանի մէջ մարմնակրթանքի վերին մարմինն է Ժողկոմսովետի կից փիզկուլտուրայի եւ սպորտի գործերի կոմիտէն, որուն նախագահն է Աղասի Չարչըղլըեան. Ա. տեղակալ եւ վարիչ՝ Գրիգոր Սիմոնեան. Բ. տեղակալ եւ մասնադէտ մարզիչ՝ Հայկ Գարսատանեան (Մարմնակրթական ուսումնարանի տնօրէն). Գէորգ Ալիխանեան, սրօնի բաժնի վարիչ:

Գաղափար մը տալու համար մարմնակրթանքի մէջ ձեռք բերուած արդիւնքներուն մասին, ստորեւ յիշենք հետեւեալ չափանիշերը.

ԾԱՆՐՈՒԹԻՒՆ (Ծանր քաշի հիւսմար)

1. Սեղմում երկու ձեռքով՝ 136 քիլ. 050 կրամ, Համբարձումեան Ս. (Համամիութենական չափանիշ):

2. Պոկում երկու ձեռքով՝ 132 քիլ. 450 կրամ, Համբարձումեան Ս. (Համամիութենական չափանիշ):

3. Պոկում ձախով՝ 100 քիլ. 0, Համբարձումեան Ս. (Համամիութենական եւ համաշխարհային չափանիշ):

4. Եռամբցում (սեղմում, պոկում եւ հրում)՝ երկու ձեռքով՝ 433 քիլ. 500 կր. Համբարձումեան Ս. (Համամիութենական չափանիշ):

Հ. Մ. Ը. Մ. ԵՒ ՍՓԱՏՕՆԸ

Տն. Ա. Ը. Մ. իուր թեան կեզր. Վարչութեան կողմն պատասխանելով, Բարիդի հայու - թիւնը՝ աննախընթաց բաղմութեամբ խրոնուած էր Մարտի 15 Պերքըլյի սրահը ազգային մեծ Սպասունին բերելու համար արդար ցասումի եւ բողոքի իր զղացումը:

Բարիդահայ բոլոր կաղմակերպութիւնները մասնակցեցան անխտիր:

Այս առթիւ, Հ. Մ. Ը. Մ. ի կողմէ խօսք առաւ Եզր. Ք. Ժպտունի, որ բուռն ու խանդավառ ծափերու տարափի մը տակ, ըսաւ.

Թարգման հանդիսանալով Հ. Մ. Ը. Մ. ի տաննակ հաղարներով սկառուս եւ մարդիկներու անկեղծ զգացումներուն, կուզամ բերել յարզանքի արտայայտութիւնս, մեր նահատակներու անմոռաց յիշատակին, եւ երկիւղածօրէն խոնարհիլ անոնց անձանօթ շիրմին առջեւ:

Իսկ ինչ կը վերաբերի, մեր Հայրենիքէն անիրաւօրէն խլուած հողերու վերադարձի պահանջքին, եւ կը նոյնացնեմ զայն մեր նահատակներու յիշատակին հետ: Չէ՞ որ այդ հողերու ամէն մէկ թիւը դեռ խոնաւ է անոնց արիւնով: Չէ՞ որ այդ հողերուն իւրաքանչիւր քայլին վրայ մեր հանդիպած կարմրադոյն ծաղիկները մեզ համար

կը խորհրդանշեն անոնց թափած արեան կաթիլները: Չէ՞ որ այդ հողերուն տակ թաղուած անոնց աճիւնները պատրաստ են հողը պատռելով դուրս պոռթկալու եւ պոռալու անարդ մարդկութեան երեսին՝ զործուած ահաւոր անարդարութիւնը:

« Մենք, Հ. Մ. Ը. Մ. ահաններս երդում ըրած ենք ծառայել հայրենիքին: Այսօր հնչած է ժամը լիւրագործելու մեր այդ խոստումը: Ուստի հաղարաւոր Հ. Մ. Ը. Մ. ահաններու առողջ կուրծքերէն բղխած կանչը կը դիմէ Աշխարհի ճակատադիրը վճռելու յաւակնող մեծերուն եւ կը դոռայ « Կը պահանջենք Կարսը, կը պահանջենք Արտահանը, կը պահանջենք դարերէ իվեր մեր պապերուն ճակտին քրտինքովը թըրծուած, մեր այրիներուն եւ որբուկներուն արցունքներովը ոռոգուած եւ մեր նահատակներուն տառապանքովն ու արիւնովը նուիրագործուած հողերուն ամէն մէկ մասնիկը:

Եւ կը խոստանանք մեր սիրելի հայրենիքին որ վաղը, Հ. Մ. Ը. Մ. ի դարբնոցին մէջ կերտուած բիւրաւոր ջլապինդ բազուկներ պիտի սլանան Հայաստան, ստուարացնելու հայ քաջերու շարքերը, եւ անոնց հետ կողք կողքի հսկելու որ,

Կիսածանր քաշի համար

Պոկում ձախով՝ 95 քիլ. 850 կր., Մանուկեան Ռուբէն (Համամիութենական եւ համաշխարհային չափանիշ):

1944ին Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՀԱՅՈՑ
ՍՍՍԱՄ ԱՐԳԻՒՆՔՆԵՐԸ
Մարմնամարզութիւն

Հայաստանի պատանի մարմնամարզներու խումբը զբաւած է ընդհանուրին մէջ 3րդ տեղը:

Աղջիկներու խումբը առանձին, Մուկուայէն ետք, զբաւած է 2րդ տեղը:

Պատանիներու խումբը՝ 3րդ տեղը:

Թեքեւ արվերիզմ

Պատանիներու խումբը զբաւած է 2րդ տեղը:

Բարձրութեամբ ցատկելու անհատական մրցումներուն առաջին տեղը զբաւած է Նովոսելով, 155 սմ. արդիւնքով:

Նոնակի նետման մրցումներուն առաջին տեղը զբաւած է Մովսիսեան, 50 մէթր 58 սմ. արդիւնքով:

Գնդի հրման մրցումներուն առաջին տեղը զբաւած է Մովսիսեան:

Բոկսի մարտ

Երրորդ անհատական տեղը զբաւած է Սարգիսեան Գ. (թեթեւադոյն քաշ):

Մ. ՄԱՌՈՒՄԵԱՆ

Կ.Ս.Ը.Ս.Ի ՅՈՒՇԱՏԵՏՐԵՍ

U.9

Հ.Մ.Ը.Ս.Ը ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԷՋ

Երուսաղէմի մէջ՝ Հ.Մ.Ը.Ս.Ի ետան - գուն դործունէութեան մասին զաղափար մը տալու համար, մեր առաջին թիւին մէջ՝ արտատպեր էինք ամսական շարժումի ժամանակացոյց մը:

Ուրախ ենք որ այսօր՝ Հ.Մ.Ը.Ս.Ի ամենէն կուռ եւ ուժեղ մէկ շրջանին մասին՝ կրնանք մեր ընթերցողներուն տալ կարգ մը տեղեկութիւններ, զոր կը քաղենք Սուրիոյ Շրջ. Վարչութեան կողմէ մեզ զբրկուած երկու Պատգմ. Ժողովներու ատենագրութիւններէն:

Ուրախ ենք մանաւանդ որ հետապնդելի նպատակին շուրջ կատարեալ համամտութիւն կը տիրէ Առժամ. Կեդր. Վարչութեան եւ Սուրիոյ Շրջ. Վարչութեան միջեւ:

Իր 8 Մարտի նամակին մէջ՝ Սուրիոյ Շրջ. Վարչութիւնը կը գրէ.

— Շրջանային վարչութիւնս Կեդրոնական մարմնի մը կազմութեան գաղափարին համաձայն ըլլալով, կը հաւատայ նաեւ անոր՝ համազգային գետնի վրայ ստանձնելիք դերին օգտակարութեան, երբ մեր արդի երիտասարդութիւնը զանազան միջավայրերու քայքայիչ ազդեցութեանց ներքեւ, ֆիզիքսպէս թէ բարոյապէս ուժացման վտանգին տակ կը գտնուի:

« Այս պայմաններու տակ անհրաժեշտ է գորաւոր հակազդեցութիւն մը. կորովի բայց դիւրիչ հոսանք մը վարպետօրէն դեկավարոված՝ ուժեղ նկարագրի տէր եւ գիտակից տարրերու կողմէ, կրնայ փրկութեան համբուն դնել մեր պատանեկութիւնը եւ երիտասարդութիւնը, պայմանաւ որ այդ տարրերը Հ.Մ.Ը.Ս.Ի գաղափարականութեան, ոգիին եւ սկզբունքներուն հարազատ առաքեալները ըլլալէ:

Հայ Ժողովուրդի պատմութիւնը այլեւս չարձանագրէ իր սեփական հողերու անիրաւ կողոպուտին, եւ իր հարազատ զաւակներուն խուժուժօրէն ջարդուելուն նման զարհուրելի եղելութիւններ:

Հայրենիքը այսօր իր արդար իրաւունքը պահանջելու համար ոտքի կանգնած, կոչ կ'ուղղէ իր զաւակներուն: Հ.Մ.Ը.Ս.Ի երիտասարդները, խանդավառօրէն եւ միաձայնութեամբ կը պատասխանեն « ներկայ », եւ պարտք կը զնեն բոլոր հայութեան վրայ, հետեւիլ իրենց օրինակին:



Պէյրութի եւ Հալէպի պատէք պօլի խումբերը (1944)

« Մենի շնորհաւորելի կը գտնենք նա - լիվաբայր եւ կը մաղթենք որ յաջողու - րեամբ պսակուին Առժամ. կեդր. Մարմնի նստածնուութեան ջանքերը, կարն ժամա - նակամիջոցի մը մէջ, Հ.Մ.Բ.Մ.ի ղեկը ապահով ձեռքերու յանձնելու համար:

« Մինչ այդ՝ վարչութիւնս կ'որոշէ բա - րոյական կապը պահել Առժամ. կեդր. Մարմնի հետ, խոստանալով անոր իր ա - ջակցութիւնը եւ գործակցութիւնը, լուս - գոյնս տանելու եւ յաջողցնելու համար սկսուած գործը: »

Այս նամակին կցուած են Երկու Պատգամ. Ժողովներու ատենադրութիւնները: Պատ - 1942 զեկտ. 3ին, Պէյրութի մէջ՝ 20 մաս - նաճիւղերու վրայ, միայն 8 մասնաճիւղե - րու ներկայացուցիչներով:

Վերջին Պատգամ. Ժողովը — Տրդը, գու - մարուած է 1944 զեկտ. 24ին, Պէյրութի մէջ եւ տեւած երեք օր: Մասնակցած են 11 Մասնաճիւղեր՝ 37 պատգամաւորներ - րով. — Հալէպ, Պէյրութ, Գամասիոս, Պուրճ Համուտ, Երուսաղէմ, Հայֆա, Տէր Զօր, Թրիփոլի, Պալպէք, Լաթաքիա, Չասլէ, եւ Երջ. Վարչութիւնը՝ 1 ձայնով:

Կարգ մը պատգամաւորներ իրենց շըր - ջանէն ընտրուած ըլլալով հանդերձ, չեն կրցած Պատգամ. Ժողովին ներկայ գտնուիլ՝ զանազան արգելիչ պատճառներով:

Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Երջ. Վարչութիւնը կը ներկայացնէ 20 Մասնաճիւղեր:

Իրենց անդամներու բազմութեամբ եւ զործունէութեամբ, այս շրջաններէն ու - շադրութիւն կը դրաւեն մանաւանդ եր - կուքը, Պէյրութ եւ Հալէպ, ինչպէս նաեւ Երուսաղէմը:

1943—44 մարդական տարեշրջաններուն, Պէյրութ արձանագրած է բեղուն զործու - նէութիւն մը, մասնակցելով մարդական կեանքի զրեթէ բոլոր շարժումներուն:

Տէր Զօր ունի 80 անդամ եւ 35 սկա - ուտ: Պատգամաւորը եղբ. Գրիգոր Գարա - րիկեան տուած է լրացուցիչ տեղեկու - թիւններ Տէր Զօրի սկաուտական կեանքի եւ տեղւոյն հայ գաղութին մասին: Հ.Մ. Բ.Մ.էն դուրս, մարդական ո՛չ մէկ կազ -

մակերպութիւն զոյութիւն ունի այս շըր - ջանին մէջ: Հակառակ շատ համեստ դա - դութ մը ըլլալուն, Տէր Զօրի մէջ՝ Հ.Մ. Բ.Մ.ի կատարած դործը արժանացած է Պատգամ. Ժողովի միահամուռ գնահատան - քին:

ՀԱԼԷՊ. — Ունեցած է 970 անդամ՝ հե - տեւալ բաժանումով: Անդամներ՝ 260, Մարդիկ՝ 200, Սկաուտ՝ 360, Գայլիկ՝ 150: Հ.Մ.Բ.Մ.ի լուսադոյն մասնաճիւղերէն ըլլալով, զործունէութիւնը ընդարձակ է եւ բազմաճիւղ:

ԵՐՈՒՍԱԿԷՄ. — 150 անդամ եւ 94 պա - տանի սկաուտներ: Ներքին կեանքը աւելի ամուր հիմերու վրայ դնելու համար, բա - ւական թիւով թոյլ եւ զանցառու անդամ - ներ հեռացուած են եւ կազմակերպութիւ - նը հնարաւորութիւն ունեցած է մարդա - կան եւ մշակութային ընդարձակ զործու - նէութիւն մը մշակելու:

Երջաններու տեղեկագրերուն ընթեր - ցումէն յետոյ, Պատգամ. Ժողովը անցած է օրակարգի հարցերու քննութեան եւ տը - ւած է կարգ մը որոշումներ:

ՍԿԱՌԻՏԻՉՄ. — Սկաուտական զործին յառաջդիմութեան համար շինայել ոչ մէկ զոհողութիւն: Այս շարժումը վստահիլ ե - թէ ոչ մասնագէտներու, զոնէ սկաուտիդ - մէ հասկցող եւ նուիրուած Հ.Մ.Բ.Մ.ա - կաններու: Ունենալ սկաուտական թերթ մը եւ հայերէնի թարգմանել սկաուտական եւ հայերէնի թարգմանել սկաուտական արժէքաւոր եւ դաստիարակիչ գրքոյկ - ներ: Չանազան մասնաճիւղերու սկաու - տական կազմերը իրար ծանօթացնելու եւ ընդհանուր գիտելիքներու զործնականաց - ման նպատակով ամէն տարի կազմակեր - պել միջմասնաճիւղային բանակումներ եւ ապահովել կարելի եղածին շափ մեծ թի - ւով մասնաճիւղերու մասնակցութիւնը:

Պատգամ. Ժողովը կ'որոշէ հրաւիրել ընդհ. խմբապետներ Ժողով մը, «Սկա - ուտական ընդհ. խորհուրդ» անուան տակ, մշակելու համար սկաուտական ընդհա - նուր զործունէութեան ուղեցոյց մը, որը նոյնութեամբ զործադրութեան դրուելով

բոլոր շրջաններուն մէջ, սկառուտական մի-
օրինակութիւն կը ստեղծուի Հ.Մ.Լ.Մ.ի
մէջ:

ՄԱՐԶԱԿԱՆ ԹԵՐԹ. — Նախորդ Պատ-
գամաւորական ժողովի որոշումը մարզա-
կան թերթ մը հրատարակելու մասին կա-
րելի չէ եղած գործադրել, տրուած ըլլա-
լով որ արտօնութիւն ստանալու բոլոր
փորձերը սպարդիւն անցած են, ըլլայ
Պէյրութի թէ Հալէպի մէջ: Պատգ. ժողո-
վը նկատի ունենալով թերթի մը անհրա-
ժեշտութիւնը որոշեց փորձեր կատարել
մասնաւոր թերթօններու ձեւին տակ կամ
փոլիգոփիով հրատարակել մարզական
անհրաժեշտ զխտելիքներն ու տեղեկու-
թիւնները:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ. — Հ. Մ. Լ. Մ.ի
կազմակերպական կեանքը ամուր հիմերու
վրայ պահելու համար եղան հետեւեալ ա-
ռաջարկները, որոնք ընդունուեցան Պատգ.
ժողովին կողմէ:

1.— Անխտի բոլոր Հ.Մ.Լ.Մ.ականնե-
րը պէտք է հետեւին բիթմիք մարզանքնե-
րու եւ իրենց գործօն մասնակցութիւնը
բերեն Հ.Մ.Լ.Մ.ի աշխատանքներուն:

2.— Նոր առաջարկ ներկայացնող ան-
հատներու մուտքը արտօնել միմիայն
հարկ եղած քննութիւններէ ետք:

3.— Միմիայն Փութպոլի սիրոյն ոչ մէկ
անդամ ընդունիլ Հ.Մ.Լ.Մ.էն ներս:

4.— Փութպոլ խաղացող անդամներուն
առանձնաշնորհումներ չընել:

5.— Հ.Մ.Լ.Մ.ի անդամը չի կրնար ու-
րիշ որեւէ մարզական կազմակերպութեան
մաս կազմել:

6.— Ոյժ տալ դաստիարակչական խիստ
կարեւոր գործին: Մարզական կեանքին
զուգընթաց Հ.Մ.Լ.Մ.ի անդամներուն
համար անհրաժեշտ է կազմակերպել մտա-
յին, բարոյական եւ առողջապահական
նիւթերու շուրջ լրջօրէն պատրաստուած
դասախօսութիւններ:

**ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ
ՕՐԷՆՔԸ.** — Նոր օրէնքի մը համաձայն
Լիբանանի մէջ գործող մարզական միութե-
աններուն կը հրահանուի իրենց անու-
նին մէջ թաղային, յարանուանական, խրմ-

բակցական, ցեղային եւ այլ բնոյթ կրող
մեկնութիւնները ջնջել: Այս հիման վրայ
յանձնարարուած է նաեւ Հ.Մ.Լ.Մ.ին որ
ՀԱՅ բացատրութիւնը վերցուի: Այս պա-
րագան յանձնուեցաւ Շրջ. Վարչութեան,
ինչպէս նաեւ տեղական Մասնաճիւղերու
ուշադրութեան:

Ձեռամբարձ քուէարկութեամբ, նախկին
Շրջ. Վարչութիւնը վերահաստատուած է
իր պաշտօնին մէջ:




**ԱԶԱՏ ԱՂԱՄԵԱՆ
ԵՒ**

**ՆՈՒԱՐԴ ՄԱՐՏԻԿԵԱՆ
ամուսնացած**

Հ.Մ.Լ.Մ.ի նախկին սկառու եւ ներկա-
յիս Կեդր. Վարչութեան անդամ, Հայկա-
կան Բէզիսթանի ղեկավարներէն քառի-
թէն Ազատ Ադամեանի ընդ օր. Նուարդ
Մարտիկեանի ամուսնութեան առթիւ կը
յայտնենք մեր ջերմ խնդակցութիւնները:

Le Gérant : **K. GIBDOUNY**

Imp. A. Der Agopian, 17, rue Damesme



22

Հ. Մ. Ը. Մ.

Տարեկան բաժնեկի՛ն

600 Փր.

50 Փր.



Դրամական առաժման համար.

U. G. ARMENIENNE

Mr. J. Artinian

Թղթակցութեան հասցէ

U. G. ARMENIENNE

« Homenetmen »

32 - 34 Rue St. Lazare - Paris (9^e)